

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 9

23 ԱՊՐԻԼ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գրական վայրկեաններ. — Գրողի մը ներքին կեանքը	ՏՕՄԻՆՕ
Կոյսն սարագազորժ (Բերթուած Անտի Թ Կորիէի)	ՏԻԳՐԱՆ ԵՂՔԵՆՃԵԱՆ
Վնարումի խնդիրը	ԳՐԱՍԵՐ
Հիմեն ու Նորեն	Տ. Ա.
Կորդեան հանգոյցը վարժարանին մէջ	ՕՐ. Պ. ՏԱՅԵԱՆ
Նկատողութիւններ «Անըջանք»ին շուրջը	Մ. Յ. Պ.
Խմբագրական Նօթեր. — Զանազանք:	

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերի սարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար Բառսուն դր. եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Զրանք կամ 5 բուլլի: Թղթասարական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առսու:

Զի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտի պայմաններով:

Զեռ-Բէ ԿԸ ՇԱԽՈՒԻ ՀԱՏԸ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

در علیہ غلطہ (ماسیس) غرضی اداره سی

ԽՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Ծաղկաբուսական

Թէլը, որ այսօր գրեթէ բոլոր ժ. դո վերջոյ գլխաւոր ըմպելիէն դարձած է, ա՛յնքան բազմաթիւ տեսակներ ունի որ, որդարեւ գործածողներուն համար բաւարար չեն ընտրութիւն մը ընել: Այդ տեսակներէն մեծը նշանաւոր են իրր արտօթանալու քաղցրաբոյր, մեծնք ալ թէեւ նոյնքան արտօթելի համ ու հոտ չունին, գերազանց են ստիպոյ իրր կողմերէն եւ զօրացուցիչ: Վերջապէս իւրաքանչիւր թէյ իր ուրոյն յատկութիւններն ունին որոնք զինքը կը զանազանեն ուրիշ, տեսակներէ:



Սակայն կայ թէյ մը, որ այդ յատկութեանց ամէնէն կարեւորները կը միաբնէ իր վրայ, այսինքն՝ գոյն, համ. համ եւ մանաւանդ կազ, դուրիշ եւ զօրացուցիչ ան. գուգական ազդեցութիւն մը, եւ այդ թէյն է ճաբոնցի բիլը, որ այդ յատկութեանց շնորհիւ կը յաբմարի ամէն տարիքի ու կազմութեան, ամէնէն կլիմայի եւ եղանակի եւ ամէն ճաշակի:

Նապրուեան եւ Իսագուլեան բիլի մեծ վաճառատունը, իր քաղմութիւն յաճախորդաց ծառայութիւն մը մատուցանելու համար, այս անգամ մեծաքանակ ներածած է ճաբոնական դուստ թէյ մասնաւոր եւ դակական առփերով ու կը հրաւիրէ օգտուել այս տոթիթէն բոլոր տեսնք, որ կը փափաքին ունենալ թէյ մը:

Համով, հոսով, առողջապահիկ եւ կազդուրիչ:

Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հնդկական, չի՛ռական, Սէյլան եւ Զափայի ամենալու տեսակ թէյեր:

Ուսադուրիւն մարգարի

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրաժանօթ մանուկաբուս. եւ կնակաբուս. (gynécologue), Տօքթօր Էմիրզէ ար 15 տարեւան գործունէութեամբը մեծ համբաւ ստացած է, կը ծանուցանէ յարգելի յոճախարդներուն թէ բժշկարանը փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18: Բաց ի վերջոյն եւ իւր մասնադիտութեան կը բաժնէ նաեւ Նորաջոյն մէթ. տներով ջղային եւ հագեցկան ու երեւակայական ամէն տեսակ հիւանդութիւնները, ինչպէս նէվրոսթէնի եւ tic անուանուած ալքիերիսի եւ ուսերու ազեղ եւ ակամայ շարժումները եւ դաշտանի դաղարումէ յոռաջ եկած ջղային խռովումները եւ երիտասարդական մալիքները, ինչպէս նաեւ գինեմալիքը, մօրիֆնաթիքը եւ այլն: Կիրակիներէն զատ ամէն օր կէսօրէն սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կըն դուրի, եւ ուրբաթ օրերը ճիւրաբար կը դարմանէ վկայեալ աղքատները: 9-10

ԳՈՐԾԱՐԱՆ

Գորգի մաքրութեան եւ նորոգութեան (Գրասենեակ՝ Մահմաւ-փաշա, Թարազճրար, Մեծ Նար կանի կից, Թ. 37)

Այս համրածանօթ գործարանին մէջ կը մաքրուին աղտոտած եւ փոշոտ թէ՛ մետաքսէ եւ թէ՛ բարդէ ամէն տեսակ ընտիր գորգեր, քիմիական դեղորէից միջոցաւ, տառնց ո՛ր եւ է արտա կամ հետք ձգելու: Ընդհանրապէս, բոլորովին նոր երեւոյթ մը կ'առնեն այս գործարանին մէջ մաքրուած գորգերը:

Ունի նաեւ տառաւելութիւն մը նոր գորգերու վրայ, այն է թէ՛ այս գործարանին մէջ մաքրուած գորգերը զերծ կը մնան ցեցերու (կիւզի) կեր ըլլալէ:

Կը նորոգուին նաեւ օրեւէ կերպով վնասուած գորգեր:

Սոյն գործարանը կը առնան նաեւ պատրաստել նոր գորգեր, ինչ մեծութեամբ ու ճաշակով որ ուզուի:

Ծանօնաբար թիւնք պէտք է ուղուին գրասենեակը:

Դիւրամասնիկ պայմաններ:

CAISSE PATERNELLE

ՔԷՍ ԲԱԴԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1841 ԻՆ

ԿԸ ԴՈՐԾԷ ՅՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԿ ՇՈՒՆ ՏԱԿ

Սկիզբէն ի վեր ապանովագրեալներու եղած վնասում 300 միլիոն ֆր.
Սկիզբէն ի վեր արձանագրեալ ապահովագրութիւն 700 միլիոն ֆր.

ԸՆԹԱՑԻԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԻՔ ՅՐ. 85,000,000

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ՊԱՀԵՍՏ 62,750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց գումարին վրայ պահեստի համեմատութիւնն է 74% որով ՔԷՍ ԲԱԴԵՌՆԵԼԻ ընծայած երաշխաւորութիւնը գեր ի վեր կը հանդիսանայ ուրիշ ընկերութեանց ցոյց առած երաշխաւորութեանէն:

Ընկերութեան վարչական խորհուրդը կազմուած է Յրաճառի ամէնէն նշանաւոր դրամատէրներէն, ինչպէս

Մ. ՌԸՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Յրաճառի երկաթուղեաց ընկերութեան եւ Քրէտի Լիօնէի վարչական խորհրդոյ անդամ.

Մ. ՄԱՐԲԻ ՏԸ ՖԼԷՌ, Դաւանադրանքի ընկերութեան վարչական խորհրդոյ անդամ.

Մ. ԿՈՄՍ ՏԸ ՍԷՆ ԿԻԼԷՄ, նախկին գանձապահ.

Մ. Օ. ՄԱՋԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Բնակի Լիօնէի.

Թուրքիոյ Տնօրէն Գ. ԱՍՏՈՒԱՇԱՏՈՒՐ

Պալիս, Սուլթան-Համաժ, Բասաժ Քաթրճըզլու

Ընկերութեան վրայ տեղեկութիւն առնելու համար դիմել Բնակի Լիօնէի.

ԾԱՆՕԹ.— Շահաւոր դիւր պիտի տրուի այն անհատներու որ կ'աւելու արգիւնք մը իւր սխալով ուղիւ անհատական:

9—10

Ա.ԴԱՄՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ասկն սեռակ բոհաֆիյէ ապրանապ

Մեծ—Շուկայ, Բիւրքինքու զբան կէց, Թ. 41—43

Նայնպէս, արանց եւ կանանց ճաշարաններու հովանոցներու վաճառատուն, Պալիս, Սուլթան—Համաժ, Միտիլի Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ թօհաֆիյէի վերաբերեալ եւ թէ՛ արանց եւ կանանց ճաշարանի հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն տակաւնութիւն, եւ շուրմատան չելի գինեւոր առաւելութիւնն ալ կ'ընծայեն հասարակութեան:

Ազաժ վարդեան մեծապէս գոհ թողացած է իր բազմութիւն յաճախորդները:

Կ'արժէ որ Շուկայ ելլող ամէն ընտանի տղայէն անդամ մը այս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հազարու համար:

9—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 12

Ա.Քէն աեռակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնագիտաբար եւ երկար առարկաներէ ի վեր կը դարձնէ ստալաքսի, աղեաց, միզային ճանքաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հիւս եւ նոր գաղտնիկ տխտերը, Այս վերջին տխտերը՝ առանց օտոմոքսի խանգարման եւ նարագոյն մեթատներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Չարեքարթի օրերը միայն ձրի: 9—10

ԲՈՒՈՐ ԵՐԱՆԱՅՔ ԱԿՈՍՑ ԿԸ ՀԱՆՆՆ

Ասիկայ որոշեալ ժամանակի մը մէջ տեղի կունենայ, սակայն անոնցմէ շատերը՝ սաստիկ ցաւօք և անհանգստութեամբ կը հանեն: Ուստի պէտք է տրուիլ մանուկներուն,



SCOTT'S EMULSION

որնոր ակոյց հանած ատեննին՝ բոլոր ցաւերէ և աղետներէ զանոնք կը փրկէ:

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԱԴՐՈՒԹԻՈՒՆ

տղայական վիշտերու համար՝ շատ կարևոր տղայական դեղ մըն է. անոնց կատարեալ առողջութիւն կուտայ և զանոնք նոյն վիճակի մէջ կը պահէ: Թող Ձեր զաւակները առողջ և զօրաւոր մեծնան շնորհիւ.

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԱԴՐՈՒԹԻՈՒՆ:

Հիշերու վրայ ասոր ուշա-
գրութիւնը ընել պէտք է:

Բոլոր բեղաժողովները և բեղաժամանները կը ծախեն:

24

ՑԱՄԱՔԱՅԻՆ ԵԻՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՅ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻՔԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴԻՔ

Ունի կեանքի, օժիտի, արկածի, ցմահ թուակի հիւղեր
VICTORIA ՎԻՔԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ կեանքի ապահովագրութիւններ ունի թէ՛
DE բժշկական քննութեամբ եւ թէ՛ առանց բժշկական քննութեան
BERLIN Առանց-բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններ-
 րուն վճարումները շաբաթական մասնավճարներով տեղի կունենան,
 սկսեալ 5 շաբաթէն

Ապահովագրեալ գումար 1903ին Ֆր. 1,325,000,000

Պահեստի դրամ 1903ին » 510,000,000

Հաստատւած 1853 սեպտ. 20ին ար-
 ալականհրովարտելով եւ ուղղակի
 կառավարութեան հսկողութեան ներ-
 քէն:

ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայսր Պանրա
 եւ Քրէտի Լիոնէ

Լիազօր Ընդհ. Ներկայացուցիչ
 ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԴԱԼՅԱՅԵԱՆ

Պոլիս Բաքրեքոյու խան

Տեսուչ
 ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԵՉԵՃԵԱՆ

Տ. 50

ԱՄԱՆԻ

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻՒ 9

23 ԱՊՐԻԼ 1905

ԳՐԱԿԱՆ ՎԱՅՐԿԵԱՆՆԵՐ

ԳՐԱՂԻ ՄԸ ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔԸ

Մանգուսի էֆեա Ժողովրդական թերթին նախկին արտոնատէր և վաղեմի խմբագիր Կարապետ էֆ. Փանոսեանի մահը առիթը կը ներկայացնէ ինծի՝ պահ մը խորհրդածելու շահեկան ու յատկանշական կէտի մը վրայ զոր ուրիշ պարագաներու մէջ ալ դիտեր եմ և չեմ համարձակեր մինչև հիմա հրապարակ նետելու:

Ամէն անգամ որ մտքի աշխատաւոր մը, մտաւորական մը մէկ խօսքով, ըլլայ հեղինակ, ըլլայ հրապարակագիր, մեռած է մեր մէջ, հարցուցած եմ ինքզինքիս թէ ինչո՞ւ անոր ներքին կեանքը, անոր intime կեանքը անձանօթ մնացած է մեր հասարակութեան և թէ ինչո՞ւ չէ գտնուած մէկը որ հետաքրքրուած ըլլայ այդ կեանքով երբ վճռաբար գիտենք թէ գրողի մը ընկերական, մտերմական կեանքը նոյնքան կարեւոր է ճանչնալ որքան անոր հանրային, Ժողովրդային կեանքը:

Արդարեւ, երբ հասարակութիւն մը տարիներով շփումի մէջ գտնուեր է այդ հեղինակին կամ հրապարակագրին հետ, երբ անկէ առաջնորդուեր է մտաւորական աշխարհի մէջ, երբ անոր գաղափարներովը սնանք է պահ մը, իրաւունք չո՞ւնի միթէ նոյն այդ գրողին ներքին կեանքին, անհատական վիճակին վրայ ծանօթանալու, ո՛չ միայն անոր մահուընէն ետքը, այլ նոյն իսկ անոր կենդանութեան ատեն:

Խորհինք պահ մը այս կէտին վրայ, եթէ կուզէք: Ըսենք հանրային կեանք և ներքին կեանք, Ժողովրդին մարդը և տունի մարդը,

այս երկու եզրերը չե՞ն ամբողջացներ արդեօք մէկգմէկ, իրարու կապուած չե՞ն միթէ: Մարդ մը որ յանկարծ գրիչը ձեռք կ'առնէ և հրապարակ կը նետուի ճշմարտութիւններ քարոզելու, բարքեր ուսումնասիրելու, գաղափարներ մշակելու, ճաշակներ կրթելու, ոգիներ ազնուացնելու գովելի յաւակնութեամբ, այս մարդը, կ'ըսեմ, պէտք չէ՞ որ իր ներքին, յարաբերական կեանքովը ալ ծանօթ ըլլայ մեզի: Շատ մեծ մտքի և գաղափարի տէր մարդիկ հանրային գործերու մէջ լոկ իրեւ գործիք ծառայած են յաճախ, բայց իրենց տանը մէջ, մտերմութեան մէջ եղած են այնպէս ինչպէս որ են բնաւորութեամբ, խառնուածքով: Արդ, ո՞վ պիտի սովորեցնէ ճանչցնէ մեզի այդ մարդը որուն բարոյապէս այնքան կապուած է հասարակութիւնը՝ որքան ինքը հասարակութեան հետ:

Խօսքս Կարապետ էֆ. Փանոսեանի վրայ չէ միայն, այլ բոլոր անոնց վրայ որոնք հայ մամուլին մէջ անուն մը ունեցած են: Մեծ մասը այս դէմքերուն ճամբորդած են արդէն դէպի յաւիտենականութիւն, բայց այսօր մեր ձեռքը ոչինչ ունինք անոնց անհատական կեանքէն մեզի բան մը սովորեցնող, խմբանոգ: Ապաքէն, սերունդէ սերունդ բարոյապէս չլիթայուած այս մարդոց անունները կը հնչենք մենք այսօր տեսակ մը յարգանքով, վերապահութիւնով, բայց միայն անոնց արտաքին երեւոյթէն, փայլէն հրապուրուած ըլլալնուս, զանոնք հանրային կեանքի մէջ ճանչցած ըլլալնուս համար, մինչդեռ պէտք

էր որ անոնց ներքին վիճակն ալ, անոնց մտերմական կեանքն ալ գիտցած ըլլայինք ըստ այնմ գնահատելու համար զանոնք. պէտք էր որ իմասնայինք թէ այս ինչ գրողը ինչ կ'արժէր իր տանը մէջ, իրեններուն աչքին, իր *interieur*ին մէջ, մտերիմներուն աչքին. պէտք էր որ ծանօթանայինք անոր ճաշակներուն, անոր զգացումներուն, անոր անձնական բոլոր յատկութիւններուն, մանաւանդ անոր կրթութեան, հմտութեան, ինչպէս նաև անոր տկար կողմերուն, անոր քրմահաճոյքներուն, մէկ խօսքով պէտք էր որ քննէինք այդ մարդը իր ամբողջութեանը մէջ, կարենալ վճիռ արձակելու համար անոր անկեղծութեանը, անոր գործերուն, անոր կարողութեանը վրայ անխտիր:

Եթէ այս մարդիկը պահեցին իրենց ներքին կեանքը հանրութենէն, ըսել է որ հանրութիւնը յոնցաւոր է այդ կեանքը չհարցնելուն, չփնտռելուն կամ անկէ հետաքրքրուիլ չ'ուզելուն համար: Եթէ հանրութիւնը մղուէր գրողի մը ներքին, անհատական կեանքին վրայ ալ գաղափար կազմելու, շատ աւելի գիտակցօրէն, շատ աւելի խղճմտօրէն զայն սիրած, դատած ու գնահատած պիտի ըլլար, որքան չէ կրցած ընել մարդուն արտաքինէն միայն շլանալով ու շատ անգամ ալ խարուելով անկէ:

Ուրեմն, մեր հասարակութիւնը չէ՛ նաեւցած իր գրողները, — ճանչնալ բառը իր ամբողջական իմաստին մէջ առնելով անշուշտ: Բայց ո՞վ պիտի ճանչցնէր զանոնք հասարակութեան, գրողները. բայց անոնք նոյն իսկ մէկզմէկ ճանչցած չեն յաճախ և կամ չեն կրցած զիրար մտերմական շրջանակի մէջ ճանչնալու առիթը կամ փափաքը ունենալ: Մտքի տէր մարդոց միջև գոյութիւն ունենալու չէ՞ր համերաշխական ողին, պաշտօնակցական մտերմութիւնը, յարգանքը. բայց մէկզի թողլով այս վերջին խնդիրը որ կրնայ հեռուները տանիլ մեզ, ըսենք թէ այն գրողներն իսկ որոնք զիրար ճանչցած են, ուսումնասիրած, շատացած են անոնց մտաւորական կարողութեան վրայ միայն կարգ մը խորհրդածութիւններ հրատարակելով և մէկզի

թողած են անոնց *intime* կեանքը, իբր թէ այս կեանքը գոյութիւն ունեցած չըլլա՛ր: Մենք ճշմարիտ կենսագիրներ չ'ունինք. իսկ իրական քննադատներն ալ մեծ բան մը արտադրած չեն ցարդ այս տեսակէտով: Դուռնուրեք, գրական մէկու մը մահուան առթիւ, մեր թերթերուն մէջ կարդացած ենք մէկ քանի *intime* տողեր որոնք սակայն մեռնողին բուն ներքին կեանքէն քաղուած չըլլալէ զատ, արտատպումն են ասդիէն անգիւն լսուած և արդէն գրուած լուրերուն և որոնք կը կայանան անոր փողոցին մէջ քալելու կերպին, կամ տանը մէջ անոր նըստուածքին ու խօսուածքին վրայ եղած պարզ նկարագրութեան մը մէջ: Էսպես, գրողի մը անհատական ներքին կեանքը անծանօթ մնացած է ամէնուն: Այս կէտը զանց առնուած է միշտ կամ կարեւորութիւն չէ ուղուած տրուիլ անոր, իբր թէ կրթութեան հակառակ բան մը եղած ըլլար այդ մասին գրելը: Արդարեւ, գրողի մը տունը կերթանք ո՛չ թէ հրապարակային մարդու մը այցելած, զայն իր *interieur*ին մէջ ուսումնասիրած կամ իր աշխատասենեակին մէջ վայելած ըլլալու դեղեցիկ մտածումով, այլ պարզապէս անձնական բարեկամի մը տունը գացած ըլլալու փափկանկատութեամբ:

Անկեղծ ըլլալու համար, պէտք է ըսել որ Արշակ Ալպոյանեանի «Անհետացող դէմքեր»ու երկարապատում շարքը և Թէոդիկի «Ճանչուոր դէմքեր»ը իրենց մէջ ոչինչ կը պարունակեն բուն մարդը պատկերացնող, գրողին ներքինը ներկայացնող: Որչափ որ կը յիշեմ, անցեալ տարի, Գր. Մալխասն էր որ շաբաթաթերթ Ծաղիկի մէջ փորձեց կարգապետ Գարագալի վրայ գրուած մէկ ուսումնասիրութեանը մէջ ներքին մարդը ճանչցնել մեզի և բաւական յաջողեցաւ:

Որովհետեւ, ինչո՞ւ չի խոստովանինք, գրողի մը ներքին կեանքը պիտի մատնէր անհատը, նոյնիսկ մարդը զոր ճանչնալու պէտք ունի հասարակութիւնը, անոր մտաւորական կարողութեան վրայ գաղափար կաղմելէ առաջ: Չմոռնանք որ մեր հասարակութիւնը *bon enfant* է, մարդը փնտռելէ

առաջ գրուածքը կը վնասուէ, որովհետեւ կը կարգայ իր անձնական հաճոյքին համար, մարտողութեան համար ստէպ և ժամանակը սպաննելու համար գրեթէ, բայց չժողանք նաև որ ցորչափ տևէ ընթերցող հասարակութեան այս վիճակը, գրականութիւնը կարող պիտի չըլլայ երբեք բարձրանալ այն վսեմ դիրքին ուր պէտք էր որ ըլլար: Չգիտեմ թէ ասկէ առաջ հանրութիւնը ո՞ր աստիճան ճանչցած էր գրողները, բայց երեւոյթներէն պատելով՝ կարելի է ըսել թէ դարձեալ գրողին անհատականութիւնը անծանօթ մնացած էր, քանի որ ունեցեր ենք հրապարակագիրներ որոնք մամուլին միջոցաւ յանդգններ են ժողովուրդին ուղղել կարգ մը յաւակնոտ, յանդուգն խօսքեր, մինչև իսկ հայհոյութիւններ, և հասարակութիւն մը ամբողջ վիրաւորել երբեմն ու անոր երեսին կոշտաբար, անպատկառօրէն պօռալ, իբր թէ նոյն այդ հանրութիւնը որուն շնորհիւ վերջապէս ապրած է միշտ հայ մամուլը, սփառած ըլլար գոեհիկ ծառայի մը դերը կատարել հանգէպ հրապարակագիրին: Եւ ցաւալին այն է որ կարգ մը հին գրողներու յատուկ այդ անվայել լեզուն տարիներու շրջանին մէջ չէ անհետացած բոլորովին և այսօր, կարգ մը նոր հրապարակագիրներու գրչին տակ ալ կը յայտնորոշուի անիկա, նուազ անպատկառ, բայց աւելի ստորին ոճով, նուազ անվայել՝ բայց աւելի խիզախ կերպով: Այս երեւոյթը պէտք չէ ուրեմն վրիպի մեր հասարակութեան աչքէն, ընդհակառակը պէտք է որ ապացոյցը նկատուի սա ճշմարտութեան թէ այն օրէն որ անհատականութեան զգացումէ զուրկ, ներքին ու ընկերական կեանք չ'ունեցող մարդիկ գրիչ շարժեր են իբրև հրապարակագիր, ուղղուելով միայն իրենց մտքի անօրինակ ու վաղահաս կարողութենէն, հայ մամուլը կորսնցուցած է իր բարոյական ազդեցութիւնը ընթերցող հասարակութեան վրայ:

Որովհետև վերջապէս ժողովրդական այն առածը որ կ'ըսէ թէ «կաղողը կեր և այգին մի՛ հարցնիր» չի կրնար պատշաճիլ երբեք գրական հրապարակին վրայ մէյմէկ փայլուն

անկիւններ գրաւելու յանդգնութիւնը ունեցողներուն համար: Անոնք տակաւին դուռնէն ներս չմտած, պէտք է որ հարցնենք կատարեալ պաշարութեամբ մը. — «Ի՞նչ, կեցէք տեսնեք, ուրկէ՞ կուգաք դուք, ձեր հմտութիւնը արժեցուցէք նախ մեր առջև և յետոյ ըսէք թէ ի՞նչ կարժէք իբրև անհատ, իբրև ընկերական մարդ, իբրև հոգիի և սրտի տէր մարդ: Մեր հասարակութիւնը անկեղծ է, բայց տգէտ է, հետեւաբար իր մտաւորական կեանքին մէջ խելացի և բարի առաջնորդներու պէտք ունի միայն. ըսէք, այդ յատկութիւնները ունի՞ք դուք, ունի՞ք բարի և անկեղծ ըլլալու քաջութիւնը. եթէ այո՛, լաւ, եթէ ոչ, ...»

Եթէ ոչ... օ՛, քանիներ գիտեմ որոնք խոյս պիտի տային նոյնհետայն, ոտքի հարուածը չկերած ետեւնուն: Պիտի խոյս տային վախնալով երեւնալ տեղ մը ուր իրենց վրայ պիտի վնասուէր մտաւորական կարողութեան հաւասար՝ եթէ ոչ անկէ աւելի չափով՝ անհատական արժանիք և ուր պիտի պահանջուէր սրտի և հոգիի ազնուութիւն, ներքին մարդը՝ մէկ խօսքով՝ զոր այսօր կ'անգիտանանք: Եթէ հայ մամուլը բաց դուռ մը չնկատուէր ուրկէ կամուրջէն անցնելու պէս մտեր ելեր են այլազան և իրարու բոլորովին հակոտնեայ դէմքեր, թերեւս այսօր մեր հասարակութեան աչքին անիկա ունենար աւելի մեծ արժանիք մը, աւելի պատուաւոր երեւոյթ մը:

Գրողին մէջ անհատը փնտռենք նախ, այս է իմ համոզումս և այս էր մտածումս:

ՏՕՄԻՆՕ

Կ. ՊՈԼՍՈՅ ազգ. վարժարաններու նոր վիճակացոյցէն, որ պատրաստուած է Ուսումն. խորհուրդին կողմէ, կը տեսնուի որ՝ 1905 յունուարի սկիզբը անոնց մէջ կը դաստիարակուէին 1866 շակերտ եւ 1267 աշակերտուհի. իսկ փոքրիկներուն թիւն է 1309 մանչ եւ 1190 աղջիկ: Ուսուցիչներուն թիւն է 186 եւ ուսուցչուհիներուն՝ 114: — Ամսական ծախք՝ 83,913 շրշ.

Կ Ո Յ Մ Ն Տ Ա Ր Ա Զ Ա Գ Ո Ր Ծ



Ճըրտին են օդք առաւօտին, ջերին աւուրք արդ անցին.
Տարազագործ կոյսն ի բարձու տանն անդադար գայ զգործով
Լզցօղափայլ տանիս երդոց յիւրմէ յարկէն գիտելով,
Եւ զղեղնացեալ մայրիս ի ծայրս անդ բըլրակաց ի բացին:

Չե են նորա ամք երեսուն, սակայն հասակն այն դարգուն
Զոր ոչ երբեք սէր կուսական պըճնեաց, ո՛չ դու թ մայրենի,
Իբրեւ ըզմիրդ դոր ոչ գըրգեաց երբեք ճաճանչ արիւնի՝
Զուրկ ի փափուկ աղուսմազիդ՝ մընայ անբոյր և տըժգոյն:

Ճակատ գունատ և խորշումեալ, նուաղեալ աչացն է նայեաց
Ի հըսկելոյ առ ժանտաբուխ ճայրոտ աղօտ լամբարի.
Իրան կըքեալ և կորացեալ, և պատմութեան իւր փարի
Զըստեամբք ծոցոյն, ի վեր հանեալ ըզհիւծութիւն կոյս լտնջաց:

Առ ի լընուլ բօվանդակել ըզսակ աւուրն երեկի
Լզցայդն ի բուն՝ ցընդարմանալ մատանցն՝ անդուլ վաստակեաց.
Եւ արդ ի լոյս առաւօտին՝ նըկարակերտն այն անկուած
Լզժաղկերանդ պարզէ ճամուկս, զոլորածոյ ծոպս ոսկի:

Խոնջեալ է նա, հիւանդադին, ցաւք հաղելոյ մաշեն զինք.
Վայր մի զվաստակն ի բաց թողու զանագորոյն զանհարին,
Տառապեալ աչք իւր մեծաբայ ընդ օդս անբաւ թափառին.
- Քանի՛ քաղցրիկ են շունչք օդոց, քանի՛ պայծառ են երկինք:

Երկայնաձիգ թելք արաքնեայ, թոյլք և թեթեւք, արծաթիք,
Յոյժ քան ըզհերըս նըրբանիւթք, ընդ օդս ի վեր ամբառնաւ,
Եւ ի լիւզելն անօրագոյն նիւթոցն յօդոց պարզութեան՝
Խառն ընդ նոսին մեղկաշօշափ լուռլուռ խաղայ մեղմ հողմիկ:

Անցեալ գընան. կէսք վասն իւրեանց նուրբ ծըփական ոստայնից
Ի սաղարթուն ոստըս ծառոց գըտանեն կայ և կըռի,
Այլք խառնամառն անկեալ չաղին ի մանրախոտս և ի խռիւ,
Թուփք և խղանք՝ մոյթք են նոցա, սօսոյք սարոյք՝ թիկնակից:

Մըջատ փոքրիկ՝ սարդ մի սիրուն տըժգոյն, առնու անկանել
Զանկուած իւր նուրբ մեաւաքսառէչ, գործած ժամուց տարփանաց,
Ապա ի կախ ըզբօսուցիկ ըզհիւմենեան զայն կառոյ՝
Անցեալ գընայ՝ զերդ նազելի հարսն՝ ընդ ոստայն նըրբաթել:

Թըռչի գիմէ նա ընդ առաջ քաղցր ամուսնոյն ում մընայր.
Նա ինքն ահա՛. — Օն չառախի՛ղք ծառոց, բուսոց ծիղք և ծղօտք,
Պատըսպարան լերուք նոցա. և դուք այերք ջերմահոտք,
Ի լոյս տուընջեան որրեցէք օ՛ն զամուսըն զայն սիրտլառ:

Ըզսէ՛ր ասեմ... Իսկ դու ո՛վ կոյսդ, միթէ չիցե՞ն քեզ հրամանք
Զի գտանիցես երբեք ըզսէ՛ր յոր միշտ մըտօք քով ձըգտիս .
Ոչ հինուցուս քօղս ի քո պէտս, պաշտել ըզքո հարսանիս,
Ո՛վ դալկադոյն և պատկառոտ քոյր դու սարդին տըխրերանք :

Ո՛վ սիրեսցէ զինքն .— Ահա սիրտ իւր խրոխտագոյն մերժէ միշտ
Զամենայն սէր վաճառելի՝ նենգող հանգոյն որոման :
Սէր՝ որ գարչանքս գընելեացն առթէ աւուրց ի վախճան,
Եւ զկին իսպառ բըծաւորեալ՝ տանջէ ցաւօք բազմավիշտ :

Ո՛վ սիրեսցէ զինքն .— Ապաքէն վարձկան ոք բիրտ հիքագոյն ,
Այլ սէր տունէ ժամավաճառ . և մէն մի ժամ որ սրանայ
Ընդ սըրանալն՝ ի պատառոյ միոյ հացկան զըրկէ զնա .
Ո՛հ, չիք սէր այնմ որ ընդ քաղցոյ ցանգ մըրցիցի զօրն ի բուն :

Ո՛չ, նա զաւուրսըն տաղտկութեան ի տոկ ձըգեալ ցըլվախճան ,
Տըւայտեսցի ի ցուրտ խըցկան , անսէր , անօք , անօրդի ,
Մինչև արկցէ զինքն տապաւտ թըլուառութեան գերանդի ,
Ի կախուցեալ աչացն հատեալ ըզքաղցր արեւն հեշտակաւ :

Երթիցէ նա հանգչել խաղաղ անդ ի խոնարհ , ի դաշտին
Ուր նորափոր գերեզմանոցն ողունք ուռնաւն կոյտ ի կոյտ,
Եւ մանրաթելք օղախաղացք արկցեն ըզտորդս իւրեանց փոյթ
Զիւրով փոսիւն , ուր աղաղուն թուփք ի դալուկն հարկանին :

ԱՆՏՈՒԻ ԹԻՕՌԻԻ

Թարգմ. ի գալիկականէ

ՏԻԳՐԱՆ ԵԼՔԵՆՃԵԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԼԻԱՌԱՏԵՐԵՐԸ

Եւրոպական թերթերու Նիւ-Եօրքի թղթակիցները ուրախութեամբ կը ծանուցանեն թէ մեծահարուստ եւ բարեգործ Քառնէկի՝ երկու միլիոն սղէրլինի նոր նուիրատուութիւն մը ըրեր է, որուն տոկոսով (տարեկան 500,000 տօլար) նպաստ պիտի ընդունին Միացեալ Նահանգաց, Քանատայի եւ Նիւ-Ճառնտլէնտի վարժարանաց բոլոր այն ուսուցիչները որոնք իրենց ծեր հասակին կա՛հ հիանդութեան բերամբ՝ անկարող կը դառնան աշխատելու : Ամերիկեան Ուսուցչաց Օգնութեան Սնտուկին Հոգաբարձութեան անդամները ինք անձամբ ընտրեր է Քառնէկի՝ Համալսարանի ուսուցիչներէ : Մր. Քառնէկի հոգաբարձութեան անդամներուն նամակ մը գրելով կ'ըսէ թէ ինքը սա եղրակացութեան յանգած է որ բոլոր ասպարէզներու մէջ ամէնէն քիչ կը վարձատրուին Ամերիկայի բարձրագոյն կըրթական հաստատութեանց մէջ պաշտօնավարողները : «Քիչ վարժարաններ կարող են հանգըստեան թոշակներ յատկացնել ուսուցիչներու եւ հետեւեանքը ողբալի կ'ըլլայ . կարող մարդիկ կը վարանին ուսուցչական ասպարէզ մանել, եւ միւս կողմէ՝ ձերուկ ուսուցիչները չեն կրնար հանգստեան կոչուիլ» :

* * * Ամերիկացի միլիառատէր Մր. Բիլէրօնթ Մօսկան, որուն կը պատկանի դըրսդներեւ կազմութեան նախաձեռնութիւնը, շարժուս մայրաքաղաքս եկաւ իր Բօրսեք գեղեցիկ շրջանաւով, պտոյտի համար :

ՎՃԱՐՈՒՄԻ ԽՆԴԻՐԸ

(ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»Ի)

Զարմանքով կարդացի Ձեր պատուական շարաթաթերթին մէջ որ երիտասարդ գրագէտներ՝ գլխաւորութեամբ իրենց նման նորի մը՝ որոշեր են անվճար չգրել թերթերու, և նո՛յն իսկ հրաւէր ուղղեր են գաւառաքնակ գրողներու որ անոնք ալ հետեւին այս ուղութեան: Մանաւանդ սա վերջին տարին երուն մէջ գրական հրապարակին վրայ այնքան անճոռնիութիւններու, — ինչո՞ւ չըսել բուն բառը, — հանդիպած ենք նորերու կողմէ, որ այս իրողութիւնը թերեւս արժէր աննկատ թողուլ, եթէ սակայն չվախնայինք որ անիրաւ պիտի հռչակուինք: Արդարեւ, վճարումի դրութեան ջատագովները թերեւս առարկեն թէ իրենց իրաւունքն է վարձատրուիլ՝ տրուած աշխատութեան մը փոխարէն:

Անտարակոյս այսպէս պիտի ըլլար, եթէ սակայն ամէն լրագիր ալ հաւասարապէս ի վիճակի ըլլար վճարելու, ինքն ալ ժողովուրդին բանիմաց դասակարգէն տեսնելով իր ընկիւղ գոհողութեան արժանաւոր փոխարինութիւնը: Բայց դժբախտաբար դեռ չենք հասած այս տեղունքը, և մեր գրագէտներէ ոմանք չափազանց խստապահանջ կը գտնուին հանդէպ լրագիրներու կամ լրագիրներէ ոմանց:

Թերթերու վրայ քննադատութիւններ, դատափետումներ ամէնէն աւելի նորերու կողմէ տեսանք, և սակայն բախտը չունեցանք դեռ ողջունելու, որ իրենք իսկ սկսէին ի գործ դնել իրենց ջատագոված և մատնացոյց ըրած գրական կամ գեղարուեստական պակասներն ու բարւոքումները: Նորերը ո՛չ միայն ասանկ բան մը չըրին, այլ նոյնիսկ ասա՛ իրենցմէ ոմանք կը նկրտին դժուարութիւններ յարուցանել գրական գործի մը հանդէպ, որ գէշ աղէկ, լռիկ մնջիկ իր ճամբան կը շարունակէ: Եւ ի՞նչ դժուարութիւն, Աստուած իմ, նիւթական հաշիւ մը, որ գուցէ վայելէր ծերուկ վախառուի մը, այլ

չիկնեցուցիչ պիտի ըլլար նորի մը համար, որ մանաւանդ յաւակնութիւնն ունի թարմ ոյժ նկատելու ինքզինքը գրականութեան մէջ:

Ուրիշ առարկութիւն մը այն է որ գրականութիւն մը հիւթեղ, իր անունին արժանի բան մը ըլլալու համար պէտք է որ գրագէտը վարձատրուի: Ասոնք առարկութիւններ են օղի մէջ: Արդէն նորերէն չա՛տ աւելի գերազանց անճնաւորութիւններ գրականութիւն ըրին լրագիրներու մէջ, առանց ո՛ր և է փոխարինութեան: Կարդալ պէտք է զիրենք, և հասկնալ, թէ ի՞նչ մեծ վիճ մը կայ արդէ կարգ մը բառակրկիտ, բառակոյտ, անամէջ գրութիւններու և իմ ակնարկած «հին» մականուանեալներու գրուածներուն միջև: Գրող նորերուն մէջ հազիւ քանի մը հոգի կայ որ արուեստով եղած են խմբագիր, և հետեւաբար, այդ կերպով կը հայթայթեն իրենց ապրուստը: Միւսները ինչպէս մեր ըլլոր «հին» գրագէտները, եղած են արտաքին աշխատակիցներ, ամաթեօններ: Արդ, ո՞վ կրնայ երբեք ըսել թէ «արդի»ներէ ու մանց պէս դրամական պահանջում ըրած են թէրգեան, Պէրպէրեան, Փանոսեան, Աճէմեան, Մ. Նորիկեան և դեռ այնքան ուրիշներ, որոնք քիչ մը ամէն սեռ ալ մշակած են, նպաստելով լրագիրներու բարգաւաճումին և որոնցմէ ոմանք դեռ կը շարունակեն մասնակցիլ օրուան գրական շարժումին, բայց առանց ո՛ր և է պահանջման:

Նորերը գէ՛թ գաղափարի տեսակէտով, — մանաւանդ որ դրամական վարձատրութեան խրտուիլակին հեղինակները նորերու մէջէն ամէնէն աւելի դժուարահաճներն են, — պէտք է ին հրաժարիլ այսքան իրտ վերապահումէ մը, և պէտք էր նախ աշխատէին իրենց հասկցած կերպով Գրականութիւն մը ծաղկեցնելու: Եթէ աշխարհի մէջ ամէն բան իր նիւթական չափովը պիտի կշռուէր, այն ատեն ո՞ւր կը մնայ գաղափարի գերակայութիւնը: Մեր գրագէտները ամօքան բժախնդրութիւն չունին ուրեմն գաղափարի մասին: Ի՞նչ հարկ կար որ յանկարծ «գրագէտի իրաւունք» անտեղի յաւակնութեամբ դրսւղ մը կաղմել

պէտք տեսնուեցաւ: Մէկը չպիտի՝ բացատրէ այս կէտերը: Բարոյական կամ նիւթական ո՛ր և է նորութիւն՝ պէտք է պահանջի մը գոհացումն ըլլայ. իրաւ, մեր նոր գրագէտներէ ոմանց — մանաւանդ ամադեօն գրագէտներու — յարուցած «վճարում»ի խնդիրը այլ ևս պահանջ մը դարձեր էր: Մէկ օրէն միւսը ի՞նչ դարձաւ արդեօք: Այս յարգելի գրագէտները ինքզինքնին մէջ մէկ Ռոշիլո — Խմբագրապետներու առջեւ կարծեցին, կամ ցարդ եղած պատուակալ աշխատակցութիւնը ամօթ սկսաւ համարուիլ հիմա:

Բայց ուրիշ անգամուան մը թողում խնդիրին աւելի մանրամասն ուսումնասիրութիւնը, թերեւ «վճարում»ի ջատագովները իրենք ալ ունենան ըսելիք:

Բերա

ԳՐԱՍՈՒՐ

Ծ. Խ. — Հրատարակելով «Դրասէր»ի այս նամակը՝ փափագեցիս է անգամ մըն ալ հրասէր կարգալ խնդրի առարկայ երիտասարդ գրագէտին, — որուն կը պատկանի ակնարկուած նախաձեռնութիւնը, — գալ պարզել իր տեսութիւնները Մասիսի մէջ, կամ եթէ լաւագոյն կը սեպէ՝ ուրիշ թերթի մը մէջ, որ հետաքրքրուի այս հարցով: Պիտի յարգէինք իր լուծութիւնը, եթէ միւս կողմէ չի շարունակէր իր հետապնդումները՝ համոզուած աս ու ան որ դադարեցնեն իրենց աշխատակցութիւնը, միշտ իրեն պատրուակ բռնելով վճարումի պահանջը:

Մեր մասին, որչափ որ տեւ այդ լուծութիւնը, պիտի յամառինք հաւատալու թէ իր ըրածը կամ ընել ուղածը ո՛չ թէ համոզումի կամ սկզբունքի խնդիր մըն է, որ շատ լուկնար լուսաբանուիլ լրագրական հրապարակին վրայ, այլ այս կամ այն թերթին վնասելու դիտում մը:

Գէթ ասանկ գրական հարցի մը մէջ՝ փափագելի էր գտնել նուազ սքողում և քիչ մը անկեղծութիւն ու իր կարծիքը հրապարակաւ պաշտպանելու արամադրութիւն մէկու մը քով որ ատեն մը «ապագայ փաստարանը» ստորագրեց:

ԿՈՐԴԵՍՆ ՅԱՆԳՈՅՑԸ

ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ^{*)}

Անոնք որ ո՛չ վարժապետ են և ո՛չ վարժուհի, կը խորհին թերեւս թէ ուսուցչական ասպարէզին մէջ ամենէն կենսական խնդիրն է այնպիսի կրթութիւն մը քալ տղոց որ ապագային՝ մարդկութեան լաւագոյն և օգտակարագոյն անդամները հանդիսանան, այսինքն անոնց մատաղ հոգիներուն մէջ տեսնել չարը և արմատախիլ ընել զայն և անոր տեղը ներմուծել բարին ու օգտակարը:

Եւ ալ այդ կարծիքէն էի, բայց կարծիքս փոխեցի այն օրն իսկ ուր ինքզինքս յիսուն աշակերտներէ բաղկացած դասարանի մը ուսուցչուհին գտայ: Այն օրէն սկսեալ, գըրեթէ ամէն շաբաթ՝ եթէ ոչ ամէն օր, իմ բոլոր ճարտարութիւնս գործածելու հարկին տակ կը դառնուէի հանդէպ... ոչ թէ կրթական խնդրոյ մը այլ... ծնողներու, և այնքա՛ն բազմատեսակ է անոնց որակը, — անտարբեր ծնողք, ոչ փափկանկատ ծնողք, գորովալից ծնողք, հպարտ ծնողք, ագէտ ծնողք և զարգացեալ ծնողք, վերջապէս ծնողք:

Անտարբեր ծնողքը շատ քիչ անգամ կ'երեւայ բեմին վրայ. ասիկայ պատճառ մը չէ սակայն որ իր անտարբերութեամբ իսկ կարգ մը դժուարութիւններու չենթարկէ քեզ:

Դեռ նոր սկսած էի գործի, երբ նշմարեցի թէ հազիւ տասը տարեկան աղջիկ մը յաճախ

(*) Ծ. Խ. — Սկիւտարի աղջկանց ամերիկեան վարժարանին (Հօմ Աքուլ) ուսուցչուհի Օր. Պայժառ Յ. Տայեան անգլիական հանդէսէ մը թարգմանաբար քաղած է սոյն գեղեցիկ և օգտալատ յօդուածը որ ծնողքներու և ուսուցչական մարմիններու յարաբերութեանց վրայ առողջ դիտողութիւններ կը պարունակէ՝ պարզ ու հետաքրքրալարժ ոճով մը, գէպքեր միայն պատմելով, որոնք ինքնին կը ներշնչեն խորհրդածութիւնը: Կը յուսանք որ անոր ընթերցումը իր բարերար ազդեցութիւնը կ'ունենայ մեր ծնողքներուն վրայ ալ:

կը բացակայէր. ծնողքին երկտող մը գրեցի և ուղեցի պատճառը իմանալ. նոյն օրը նիւհար, փոքրակազմ մարդ մը երեւցաւ դասարանիս մէջ: «Չեմ հասկնար թէ ինչու, ըսաւ, տղաս այսչափ շատ կը բացակայի, մէկ օր մը միայն տունը մնաց, այն ալ հիւանդութեան պատճառաւ, ամէն առաւօտ ես անձամբ զինքը դպրոց կը բերեմ»: Տետրակս բացի և ցցուցի. — «Օր մը ամբողջ բացակայ և քսանընթաց օր ալ կէս օրերէ վերջ» — «կէս օրերէն վերջ, ատիկայ բացակայի ըսել չէ»: և երբ ես բաւական մեծ դժուարութեամբ հասկցուցի իրեն թէ կէս օրէն վերջ տարբեր դասեր կ'աւանդուէին և թէ տղան այդ դասերը կը կորսնցունէր, ըսաւ՝ քաղցր ժպիտ մը պատմելով չրթունքներուն վրայ. «Իրիկունը կամ զիշերները երբոր ուղէք թո՛ղ գայ և կորսնցուցած դասերը սորվեցուցէք իրեն»: Փափկանկատ մարդ, օրուան աշխատութիւնը չբաւէր, պէտք է իր քմահաճոյքը գոհացնելու համար հանգիստի ժամերդ ալ զոհես:

Ամէն բանի խառնուող ծնողքը ամենէն անտանելին է:

Միշտ պատճառ մը ունի, պատճառ մը զոր երկար ժամանակ խորհրդածութեանց առարկայ ըրած է, որ շատ մը բանաւոր ապացոյցներու վրայ հիմնուած է. ուր որ հանդիպի քեզի՝ վիճաբանութեան կը մտնէ հետդ, փողոցին մէջ, բազմութեան մէջ, երեկոյթներու մէջ, վերջապէս ամէն տեղ:

Օր մը դպրոց այցելեց տիկին մը՝ մայր տաններէն տարեկան շատ գէր, կամիր երեսներով, սև աչքերով, խելացի դէմքով տղուն մը և կին համբաւաւոր բժիշկի մը: Մանուկ մը մեծցնելու ամէն խնդիրներու վրայ հեղինակօրէն կը խօսէր: Դպրոցէն վերջ, դիտողութիւններու տարափ մը թափեց գըլխուս: «Կարծեմ շատ աղէկ պիտի ըլլար եթէ տղաք կէս ժամը անգամ մը մարզանք ընէին բաց օդին մէջ, ամբողջ օրը նստած՝ մտքերնին կը յօգնեցնեն, մաքուր օդին մէջ բուռն շարժումներ արեան շրջանը պիտի կանոնաւորեն և թոքերուն մէջ առատ թթուածին պիտի ներմուծեն» — «Այդ հաշուով օրը ժամ

մը մարմնամարզի տալու է» առարկեցի. — «Մէկ ժամը շատ է» բացադասեց, տգիտութեանս վրայ զարմանալով. — «Մէկ ժամը շատ չէ, բայց տղաք միայն հինգ ժամ կը մնան վարժարանին մէջ: Ծնողք քսաներեք ժամ ունին իրենց տրամադրութեան տակ ուղածնունչափ մարմնամարզ ընելու համար»:

Ասոր վրայ առաջարկեց որ ամէն դասէ վերջ սրահին մէջ չրջան մը ընեն, պատուհանները բաց, ասոր ալ առարկեցի թէ տղոց հանած աղմուկը վարի յարկի դասարանները պիտի խանգարէր. «Ուրեմն կայնած տեղերնին թող շարժումներ ընեն» ըսաւ. — «Պաղ կ'առնեն» պատասխանեցի. վերջապէս առարկութիւններէս զգուած եւ տգիտութեանս վրայ կատարեալ համոզում գոյացուցած՝ մեկնեցաւ:

Այսպէս մը ունէի որուն երեք ամիսէ ի վեր յաջողած չէի այբուբէնը սորվեցնել. երկտող մը գրեցի մօրը եւ խնդրեցի որ տունը օգնէ իր զաւակին. հետեւեալ օրը իբր պատասխան, մայրը ինծի եկաւ. պատահեցաւ որ այդ օրը տղաք մարմնամարզի եւ գծագրութեան դասեր կ'առնէին: Արձակուրդէն վերջ ըսաւ ինծի. — «Մեր օրերուն դպրոցները շատ տարբեր էին, մենք կարդալ, գրել, խոսարհել, լուծել, հաշուել, այս տեսակ բաներ կը սորվէինք. իսկ հիմա, մարմնամարզ, գրծագրութիւն, երգ, դաշնակ, ձեռագործ ասոնք միայն կը սորվին: Անգամ մը սա մարմնամարզը տե՛ս, ոտքերնին, ձեռքերնին ջլագարներու պէս օդին մէջ կը շարժեն տղաք, ճիշտ կէս ժամ: Մենք մեր տղաքը դպրոց կը դրկենք որպէս զի դա՛ս սորվին, դա՛ս, այդ բոլոր այլանդակութիւնները տունն ալ կրնան ընել, ի՞նչ է ատ, վեր նստէ, վա՛ր նայէ, ա՛ջ, ձա՛խ, յառա՛ջ, ե՛տ, յիմարութիւններ»:

Սիրուն աղջիկ մըն էր Ատէլ, գանգուր մաղերով: Կզոյիկ հայելի մը կը պահէր գըլխանը եւ ատենը մէյ մը զայն դուրս կը հանէր մաղերը շտկելու համար. շատ անգամ գիրքը երեսին կը բռնէր դասը ուշադրութեամբ պատրաստողի մը ձեւով, մինչ գիրքին ետեւէն խամաճիկ ընելով տղաքը կը

զուարճացնէր։ Օր մը կարմիր մեկան բերաւ վարժարան եւ գիրքին բոլոր գլխագիրները ներկեց, պատժեցի զայն, ու թ օր վերջը սեւ մեկանով ուրիշ գիրք մը ներկեց, երբ զարմանք յայտնեցի իր անհնազանդութեանը վրայ, պատասխանեց— «Այն օրը, Օրիորդ, կարմիր մեկանով ներկած ըլլալու համար պատժեցիք զիս»։ Ատէլ չատ անգամ ալ կը բացակայէր, ըրած գիտողութեանս սա անուղղակի պատասխանը ընդունեցի մօրմէն. «Եթէ ուզեմ ամէն օր տունը կը պահեմ աղջիկս, դպրոցը տղոց համար չի նուաճէ եւ ոչ թէ տղաք դպրոցին համար»։ Ամէն անգամ որ Ատէլ կը բացակայէր, յաջորդ օրը ու չ տուն կը դրկէի զայն, օր մը սա երկտողը ստացայ. «Օրիորդ, չեմ ուզեր որ Ատէլ ու չ մնայ տունը պէտք ունիմ անոր», առանց մօրը արգելքը նկատի առնելու՝ նոյն օրը նորէն պատժեցի Ատէլը, հետեւեալ օրը բացարձակ արգելք մը կը դրուէր վրաս, հակառակ ատոր, պզտիկը նորէն կը պատժուէր. կէս ժամ չանցած՝ երկայնահասակ կին մը, խոշոր գլխարկ մը դրած գլուխը, մազերը գանգրած, ոսկի ապարանջաններ դրած թեւերուն վրայ, ներս խոյացաւ սենեակէս եւ բարկութեան թափով մը ինծի մօտեցաւ առանց բարեւելու եւ երբ սրահին մէկ անկիւնը իր տղիկը նշմարեց՝ ողբերգական ձայնով մը բացագոհեց. «Ահա իմ աղջիկս, ահա իմ աղջիկս»։ Իր այդ արտակարգ վարմունքէն սարսափեցայ, պահ մը խորհեցայ սենեակէն խոյս տալ, օգնութիւն աղաղակել, բայց այն ատեն վախկոտ մը պիտի կարծէր զիս. քաջութիւնս գտայ։ Մայրը կը շարունակէր. — «Ձեր ըրածը անհերելի է, աղջիկս պատժել, արգելեցի ձեզ, արգելեցի, կը հասկնա՞ք, եւ ինչպէ՞ս կը համարձակիք նորէն վար դնել զայն, մասնաւոր հակակրօնութիւն մը ունիք իմ աղջկանս դէմ, հաճո՞յք կը գտնէք զայն պատժելուն մէջ»։ Հարկ եղաւ երկու ժամ սիրտ հատցնել համոզելու համար մայրը թէ իր աղջիկը չատ ահառակ էր, եւ թէ ոչ միայն չէի հակակրօն իրեն՝ այլ կը սիրէի ալ զայն. եթէ վարժուհի մը եղած չըլլայի, Ատէլի մայրը ներողութիւն պիտի խնդրէր ինձմէ, այնքան ամփցաւ ըրած էն։

Թերեւս ոչ մէկ ծնողք այնքան մտահոգութիւն եւ ցաւ կը պատճառէ ուսուցչին որքան տգէտ մայր մը. կան մայրեր որ իրենց փախկակազմ փոքրիկները կը զրկեն վարժարան եւ իւր կերակուր անուշեղէն եւ պտուղ կը դնեն անոնց սակաւին մէջ եւ վերջն ալ կը գանգատին թէ իրենց պզտիկը միշտ հիւսանդ է եւ չուտ կը յոգնի. ուրիշ մը ձմեռ ատեն իր տղան վարժարան կը զրկէր բարակ կօշիկներով եւ առանց հովանոցի՝ ու կը զարմանար թէ ինչո՞ւ հարբուխը վրայէն պակաս չէր։ Աչակերտ մը ունէի այնքան հեռատես որ շարունակ գլխու ցաւերու ենթակայ էր. խնդրեցի մօրմէն որ ակնաբուժի մը տանի պզտիկը. ինք անձամբ եկաւ իր պատասխանը բերելու. օղջ ցուրտ էր եւ արիւնը ինքզինքը ցուրտէն պատսպարելու համար մուշտակէ մեկնոց մը առած էր ուսերուն վրայ. անոր տակէն հաստ չալի մը ծայրերը կ'երեւային, եկաւ եւ ձիշդ վառարանին քովը նստաւ. խնդրեցի որ տեղը փոխէ քանդի տեսայ որ տաքէն կը նեղուէր, չհաւանեցաւ՝ մուշտակը ուսերուն վրայէն առնել առաջարկեցի. ասոր ալ ժխտական պատասխան տուաւ, երկու ժամ այդ հնոցին քով նստաւ։ Դպրոցը աւարտելէն վերջ, սկսանք իր աղջկան վրայ խօսակցիլ, գիտողութիւններու մասամբ համողութեամբ՝ մեկնեցաւ։

Յաջորդ օրը աղջիկը եկաւ պատմել ինձ ինչ որ հաւանաբար իմ ականջներու համար ըսուած չէր։ «Երէկ իրիկուն հայրս ըսաւ թէ իմ աչքերս իրեններէն աղէկ էին, որովհետեւ չա՛տ, չա՛տ հեռուն կը տեսնեմ, կ'ըսէ որ եթէ անգամ մը ակնոց դորձածեմ, ա՛լ առանց անոնց բան մը չեմ տեսներ. մայրս ալ կ'ըսէ որ, եթէ դպրոցին սրահը քիչ մը նուազ տաքցնէք, տղաք գլխու ցաւ պիտի չունենան»։

Ուրիշ աշակերտուհի մըն ալ ունէի Գլխարկալէլ անունով որ բառին բովանդակ նշանակութեամբ նողկալի աղջիկ էր, ոչ մէկ բանի կը հաւնէր, ոչ մէկուն ըրածը իրեն համար արժանիք մը ունէր, իր երեւոյթը քիչ մը սարօրինակ ըլլալուն համար տղաք չատ անգամ ակնապիշ զինքը կը դիտէին, եթէ

մօտ ըլլար, իբր փոխարինութիւն անոնց երեսը կը ճանկուէր, իսկ եթէ հեռուն ըլլար՝ լեզուն դուրս հանելով կը գոհանար: Այս աղջիկը ուղղելու համար ամէն բան փորձեցի, համակրութիւն, համողում, խստութիւն, պատիժ, իզո՛ւր: Հարկ եղաւ ծնողացը դիմել, դիտողութեանս վրայ մայրը վարժարան եկաւ. փոքրահասակ կին մը՝ այր մարդու գըլխարկ դրած և վերարկու մը հագած, առաջին անգամիկ կռահեցի որ ասիկա զարգացեալ նորեկուկ ծնողքներէն էր:

Ներս մտնելուն պէս—«Այս սենեակին ողջ շատ ապականած է, բացառանչեց, պատուհան մը բանամ», պաղ հով մը փչեց պատուհանէն ներս ճիշդ այն տղոց վրայ որոնց մայրերը մասնաւորաբար խնդրած էին որ պաղ չառնեն իրենց յղաքը. պատուհանը գոցեցի, ներողութիւն խնդրելէ վերջ—«Սակայն սենեակին ողջ սոսկալի կերպով ապականած է, ածխային թթուով լեցուն է, հոտը կ'առնամ, չէ՞ք գիտեր որ ածխային թթուն մարմնոյն բոլոր բջիջները կը կազմաւորէ, ուրիշ պատուհան մը բանամ», ան ալ գոցեցի միշտ ներողութիւն խնդրելով: «Ի՞նչ, միտք ունիս այս մատաղ հոգիները թունաւորե՞լ» պօռաց.—«Ածխածինին հոտը չէ, տիկին, ինչ որ կ'առնէք թաց կաշիի հոտ է՝ այս տղոց ոմանց թաց կօշիկները և հովանոց չունեցողներուն թաց հագուստները տաք սենեակին մէջ կը չորնան, անոնք են որ կը հոտին»:

—Խոնաւ հագուստ, թաց կօշիկ և դուք կը հանդուրժէ՞ք անոնց:

—Ի՞նչ կրնամ ընել, չեմ կրնար ամէն տղոց հովանոց, կօշիկ, հագուստ հայթայթել, այդ հոգը ծնողաց չի՞ վիճակիր արդեօք:

—Ի՞նչ կրնաք ընել, ի՞նչ կրնաք ընել, կրնաք զարգացնել այդ տգէտ ծնողաց մտքերը:

Մինչ այս խօսակցութիւնը կը շարունակուէր, քառասունէ աւելի զարմացկոտ աչքեր մեզ կը դիտէին: Դէմ առ դէմ կայնած էինք կինը ձեռքերը քովի գրպանները խօթած՝ այր մարդու դիրքով շարունակեց.

—Դուք պատեհութիւն ունիք զարգացման սերմերը ցանկու, դուք կը թուծեան

առաքեալը, կ'ըմբռնէ՞ք արդեօք ձեր պաշտօնը կատարելագէտ:

Նոյն միջոցին, մանչ մը Գարիպալի քովէն կ'անցնէր, աղջիկը կայծակի արագութեամբ անոր ձեռքը ճանկուտեց, ա'լ համբերութիւնս հատաւ, ուսերէն քունեցի ցնցեցի դայն և բերի իմ աթոռիս վրայ նստեցուցի: Մայրը աչքերը խոշոր, խոշոր բացած կը նայէր, ոտքի ելաւ: «Ձէի սխալած, ըսաւ, դուք չէք հասկցած այս մատաղ հոգիները, դո՛ւք չէք ճանչնար բարին, գեղեցիկը և նմարթքը, դուք կը վերաբերիք տգէտներու դասակարգին»:

Ընթերցողները չեն երեւակայեր անշուշտ որ ուսուցչական ասպարէզին մէջ միայն այս տեսակ ծնողքներու հետ գործ ունեցած ըլլամ: Հանգիպած եմ անանկներու որոնք իրենց փափկանկատողութեամբ, ուշիւութեամբ և կարեկցութեամբ շատ մը դժուարութիւններ հարթած են ճամբուս վրայ:

Սակայն վարժարանի մը Կորդեան հանգոյցն է և պիտի մնայ ծնողքս:

թարգմանօրէն. Պ. Յ. ՏԱՅԵԱՆ

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

«ԱՆՐՋԱՆՔ»-ԻՆ ՇՈՒՐՋԸ

Քննադատութիւնը՝ հակառակ մշակուելու լուրջ ու փափուկ արուեստ մը ըլլալուն, մեր գրականութեան վերջին 25—30 տարուան չրջանին մէջ չէ՛ ունեցած իր արժանաւոր դերը և կորսնցուցած է իր կարեւորութիւնը: 1930էն ասդին սահող տարիներուն հետ, հայ գրագէտը հետզհետէ լքած ու մոռցած է դայն, բան մը որ ի՞նչ տեսակին մէջ ցաւալի ըլլալէն աւելի՛ զգալի պակաս մը թողած է մեր գրական հրապարակին վրայ:

Պէտքը չեմ զգար գրականութեան այս ճիւղին կարեւորութեանը մասին վեր ի վերոյ գլուխօք մը կաղմելու համար երթալ պահ մը անդրադառնալ օտար գրականութեանց, ուր իրօք քննադատութիւնը զարգացած վիճակ մը ստացած է: Քննադատութեան նպա-

տակն է, հարկէ չեղտել, դիրք մը կամ ու է հրատարակութիւն մը ամէն տեսակէտով քննել։ Թուել այդ երկին լաւ ու գեղեցիկ մասերը, չմոռնալով միեւնոյն ատեն մէջտեղ դնել անոր թերի կողմերը։

Քննադատութիւն բառը թերեւս պէտք եղածին չափ հասկցուած չ'ըլլայ մեր մէջ, սակայն սա գոնէ իրողութիւն մըն է թէ՛ մենք ըստ բաւականի զգածուող ժողովուրդ մըն ենք։ Արդարեւ շատ դժուար պիտի ըլլար քննադատի մը համար ապրիլ ու իր գոյութիւնը պահել այնպիսի գրական հրապարակի մը վրայ, ուր զգածուող սրտերը կճող գրիչներէն աւելի մեծկակ թիւ մը կը կազմեն։

Բարեկամք բան մը կը գրէ, կ'ուզես քննադատել դայն, բայց վախնալով որ այդ արարքովդ կրնաս անոր սիրտն ու զգացումները վիրաւորել, վար կը դնես գրիչդ ու կը լքես որոշումդ։ Իսկ անդին օտար գրականութեան մէջ ճիշդ հակառակն է։ Հեղինակը կը ստիպէ իր բարեկամները, որպէսզի իր գրքին վրայ քննադատութիւն մը գրեն, վստահ ըլլալով թէ ան (քննադատութիւնը) որքան ալ խիստ ու անաչառ, ամէն պարագայի մէջ պիտի կրնայ այդ հեղինակութեան արժանիք մը տալ, ինչպէս նաև բարձրացնել գրողին վարկը։

Լուրջ ու խզճամիտ քննադատութիւն մը ուրեմն քննադատողին պարծանքն է միշտ։

* *

Թերեւս շատ ուշ մնացած ըլլամ երկու խօսք ընելու Անգլացի մասին, որուն վրայ մինչև ցարդ բաւական գրուեցաւ արդէն։ Սակայն չեմ կարծեր թէ՛ տպաւորութիւն մը գրի առնելու համար, ժամանակը կարենայ գրողին ու է արդեւ մը ըլլալ։ Արդարեւ ներկայացնելու պէտքը չեմ գտար «Անըրջանք»ի երկատարը հեղինակը, որուն թէ՛ արձակ և թէ՛ բանաստեղծական կտորները բաւական ժամանակէ ի վեր վայելեց ու կը վայելէ ընթերցող հասարակութիւնը։ Մ. Ա. Պարսամեան անծանօթ գրիչ մը չէ այլ ևս մեր գրական հրապարակին վրայ։ Անգլացի հեղինակը գրականութիւնը սիրեց ու անգամ մը անձնատուր ըլլալով այդ սիրոյն, չուզեց կամ չկրցաւ դատուիլ անկէ։

Թերեւս իր անունի հմայքին մեծ մասը իր աննման դիմակին՝ Մառի Յովհաննէսեանի կը պարտի, որ բաւական աղմուկ հանեց իր չուրջը ու երկար ատեն՝ նոյն իսկ իր արուեստակից եղբայրներուն անծանօթ մնաց։ Սակայն, ինչ որ ալ ըլլայ, սա՛ միայն կըրնանք ըսել թէ՛ Պարսամեան, որքան ալ նոր դէմք մը մեր գրական հրապարակին վրայ, կրցաւ ունենալ գրչի ժիր գործունէութիւն մը։

Անգլացի հատորիկը, 75 էջերէ բաղկացած։ չորս տարուան (1900—1904) մէջ գրուած 66 ոտանաւորներու հաւաքածոյ մը կը ներկայացնէ։ Այս բանաստեղծութեանց գրեթէ կէսը չաբաթական հանդէսներու, մասնաւորապէս Մասիսի մէջ երեւցած են արդէն։ Անգլացիին թէ՛ արուեստի, թէ՛ լեզուի և թէ՛ ոճի տեսակէտով, էն նկատելի ոտանաւորներէն մէկը կրնայ համարուիլ «Թըրթուռններ»ը, որ տարօրինակ պատուի մը արժանացաւ, ֆրանսերէնի թարգմանուելով Մ. Ֆլաթէի և Ա. Դ. քս. Փանոսեանի կողմէ, ինչպէս նաև Կրաբարի՝ Տիգրան Եղեղէնեանէ։ Երկրորդ ոտանաւոր մը, առաջինին չափ յիշատակելի, «Բաժնուած Սիրտեր»ն է որ Մասիսի բացած ոտանաւորի մրցման մէջ մրցանակի մը արժանացաւ։

Պարսամեանի լեզուն պարզ ու կոկիկ աչխարհաբարն է. դժուար ու խրթին բառեր ինչպէս նաև անկանխիկ չեն խոնուած հոն։ Քերականական կանոններն ալ նկատի առնուած են, այնպէս որ, կարծես ամէն մէկ տողին մասնաւոր իմամք մը տարուած է պարզ ու դիւրհասկնալի ընելու լեզուն։

Անգլացի կարգացող մը իրաւունք պիտի ունենար խորհելու թէ, Պարսամեան յանգի մասին բժախնդիր չէ եղած, և կամ աւելի՛ չէ ուղած հպատակեցնել իր զգացումները տաղաչափութեան այդ օրէնքին։ Արդարեւ, այս եղբայրացութիւնը կրնայ ուղիղ կամ ճշմարիտ համարուիլ, քանի որ յանգերը ոչ ճոխ են ոչ ալ աղքատ։ Սակայն պէտք է գիտնալ թէ բանաստեղծի մը արժանիքը հոտ չի կայանար միայն, կ'ընդունինք թէ ոտանաւորի մը տողերը ներդաշնակ հնչելու են ականջին, բայց այդ չի նշանակեր երբեք թէ բանաստեղծութիւնը յանգի արուեստն է։

Եւրոպացիին սա սահմանը պիտի տար բանաստեղծութեան. — «Բանաստեղծութիւնը գրգռուած յուզումի մը լեզուն է. բանաստեղծը իր արժանիքը կը պարտի ունեցած երեւակայութեանը» :

Այս սահմանը չեղտող կամ բացատրող բանաստեղծութիւններ չեն պակսիր օտար գրականութեանց մէջ, ոտանաւորներ ու տաղեր, որոնք զգացումով, երեւակայութեամբ և գեղեցիկ խորհուրդներով լեցուն, սակայն երբեք տեղի չեն տար յանգի օրէնքին : Անգլիական բանաստեղծութիւնը կրնանք իբր յարմարագոյն օրինակ մը մէջ բերել հոս :

Ուելսեմ Շէյքսպիր, Պայրըն և դեռ ասոնց նման կարգ մը աշխարհահայկ բանաստեղծներ, որոնց անունը տիեզերքին ամէն անկիւններուն մէջ արձագանգ գտած է, քիչ անգամ նկատի առած են այդ օրէնքը, ան ալ քերթուածներուն մէջ զանազանութիւն մը մտցնելու համար :

Բանաստեղծ մը որքան ազատ ըլլայ առարկայականին (Objectif) մէջ, այնքան աւելի և ուժով կրնայ թափանցել երեւակայութեան :

Հոս պէտք է խոստովանինք թէ Պարսամեանի նկատողութենէն չեն վրիպած այս կէտերը, որոնք առ հասարակ իր ամէն ոտանաւորներուն մէջ բացորոշ կ'երեւին :

Անրջանքի մէջ գաղափարի խճողում ըսուած բանը չտեսնուիր. տողեր կան որոնք մէկէ աւելի սիրուն պատկերներ, նմանութիւններ (simile) և փոխառութիւններ (metaphore) կը պարունակեն, ինչպէս.

Դուն մասօնն ես սեւ մասունդն մեզ միմակ
Ես բուռվարն եմ յոյս բուռմին ձեռք սիրալի
Հուրով լեցուն, խուցկով արթն ու կարմիր
Կը վառիմ միտք. կը ծխիմ միտք ոսփրդ ցակ» :
Նաև

Սնդուսները գրկած անցիւք հոյանի
Կուրծներուն քոյլ բաբախումները խրով
Բուռումներուն անուշութեամբը առի
Նոր սեւերուն քովք կ'երգեն հեւալով.

Ուրիշ մը

Աղուռ աչներուն քովք կը կարդան
Հիւս երազներս, համբոյրով մ'անքեւ

Ըզձանգներու մեջ կը ծիւրիս անձայն
ձեռնակ մարմաշէ ֆոլերու ետեւ. —

Նիւթը հարկ է ըսել, քանի որ Պարսամեան իր առաջին ձօնն իսկ սիրեմ բայով կը սկսի. «Անոր՝ զոր պիտի սիրեմ...» : Անրջանքի ոտանաւորները առանց բացառութեան ամէնքն ալ սիրային տաղեր ու ձօներ են, ուր զգացումը երթալով աւելի կ'ապրի և աւելի կ'արժարծի : Պարսամեան նիւթի դանաղանութիւն չ'ունի. միակ սէրն է որ կը բաբախէ այդ փափուկ կուրծքին տակ, ոչ նուազ փափուկ և զգայուն սրտի մը մէջ : Անրջանքի տողերը տարբեր անկիւններէ բըխող ու միայն մէկ տեղ հոսող սիրոյ յուշողումներ, հառաչանքներ ու բաղձանքներ են, որոնք բանաստեղծին սահուն գրչին տակ գալով կազմած են այդ սիրուն ու մեղամաղձոտ տողերը :

Անրջանքի նիւթի միօրինակութիւնը չատերուն ձանձրացուցիչ երեւցած է քիչ մը, մանաւանդ անոնց, որոնք հեռացած և կամ բոլորովին հրաժարած են սիրոյ աշխարհէն : Պարսամեանի ոտանաւորներուն մէջ, եթէ կայ ուրիշ նկատելի կէտ մըն ալ, սա է թէ, արուեստը միշտ յառաջդիմած է հոն, այսինքն ոտանաւորները երթալով աւելի գեղեցիկ, աւելի ճարտարօրէն գրուած են և մէկգմէկ կը գերազանցեն :

Ասիկա երկտասարդ հեղինակին տուած ապացոյցներէն մէկն է, թէ ապագային ա'լ աւելի ընտիր և աւելի՝ ձօխ հատորներ պիտի ներկայացնէ ընթերցող հասարակութեան :

Ռօպերդ Դօլէն

Մ. Յ. Պ.

ՁԱՐԻՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

Ի մասին կ'օգնային ազատութեան Ռուսիոյ մեջ

Ներշնչութիւն. Հրովարտակ մը հանեց, որով թոյլտուութիւն կ'ընէ ամէն ռուս հպատակի՝ իր ուղած կրօնը դաւանելու : Այսուհետեւ ոչ մէկ ռուսահպատակ ու է դատարկ անտրինութեան կամ խոստովեան պիտի չենթարկուի՝ օրթոտոքութիւնը թողլով ու իշխանութեան կամ ոչ — քրիստոնեայ դաւ

ւանութեան մը յարեւուն չամար: Ամէն ուս-
սանպատակ աղատ է կրօնափոխ ըլլալու:
Ամէն անոնք որ չափահաս եղած են՝ աղատ
են՝ իրենց ուղած դաւանութեան պատ-
կանելու:

Եթէ այր ու կին միեւնոյն քրիստոնէա-
կան կրօնը կը դաւանէին և դաւաններ ու-
նեցան, և եթէ մէկը կամ երկուքն ալ յետոյ
կրօնափոխ եղան, պէտք է նկատել երեք
տարբեր պարագաներ. — 1. — Եթէ միայն հայ-
րը կամ միայն մայրը կրօնափոխ եղաւ, ան-
չափահաս տղայք կը մնան կրօնափոխ չեղող
ծնողին դաւանութեան մէջ: — 2. — Եթէ հայրն
ու մայրը միանգամայն կրօնափոխ եղեր են,
1½ տարեկանէն վար տղաք նոր դաւանու-
թեան մէջ կը մտնեն իրենց ծնողաց հետ և
այնպէս կը մնան մինչև իրենց չափահասու-
թիւնը: Իսկ 1½ տարեկանէն վեր եղող տղայք
կը մնան առաջնուան դաւանութեան մէջ,
մինչև որ չափահաս ըլլան, և այն ատեն կը
յայտնեն իրենց կամքը: — 3. — Իբրև ուս օր-
թոտօքս արձանագրեալ ամէն ոք, որ իրա-
պէս իր ոչ — քրիստոնէայ դաւանութեան մէջ
կը մնար, կամ իր նախահարց կրօնը կը չա-
րունակէր, իր խնդրանք պիտի արձակուի
օրթոտօքսի արձանագրութենէ, և իր ուղած
դաւանութեամբ պիտի արձանագրուի:

Ամէն քրիստոնէայ, ի՞նչ դաւանութենէ
ալ ըլլայ, երբ չմկրտուած տղայք գտնէ և
որդեգրէ, աղատ է իր ուղած կրօնին մէջ
մկրտելու զանոնք:

Կրօնային աղատութիւնը նուիրագործող
նոր օրէնքն իրարմէ կը զանազանէ երեք
տեսակ աղանդներ. 1. — «Հին հաւատաց-
եալ» կոչուածները, որոնք օրթոտօքսութեան
հիմնական վարդապետութիւնները կը դաւա-
նին, բայց այնքան ծիսական չեն: — 2. — Ուրիշ
աղանդաւորներ որոնք վարդապետութեան
տարբերութիւններ ունին բաղդատմամբ Օր-
թոտօքսութեան, բայց օրէնքով արգելքի
ներքէ չեն, թէպէտ իրենց ծէսերն ու արա-
րողութիւններն իբրև զատ դաւանութիւն
չեն ճանչցուած: — 3. — Մոլեռանդական ա-
ղանդները, որոնք պատժական օրէնքով ար-
գիւրած են, որովհետև ամուսնութիւնը

կ'արգիլեն, կենսական գործարանները կը խա-
փանեն, զինուորական ծառայութեան դէմ
կը խօսին և չն.

Արդ, Հին Հաւատացեալք և միւս աղան-
դաւորներուն կազմակերպեալ մարմիններն
օրէնքով պիտի ճանչցուն իբրև զատ դաւա-
նութիւն, և իբրև բարոյական անձնաւորու-
թիւններ՝ իրաւունք պիտի ունենան ինչք,
ստացուածք և կալուած ունենալու: Անոնք,
յար և նման ոչ — օրթոտօքս պաշտօնական
դաւանութեանց, իրաւունք պիտի ունենան
եկեղեցիներ ու վանքեր շինելու, դպրոցներ
բանալու, և չն. Աղանդաւորներուն օրթո-
տօքսներու հետ խառն ամուսնութեան օրէն-
քը կը մնայ նոյնը ինչ որ է այժմ: Պետական
ծառայութեան նկատմամբ աղանդաւորներն
ամէն կաշկանդումէ զերծ պիտի մնան, և ի-
րենց դէմ դատարանի վճռով կամ վարչային
կարգադրութեամբ ի գործ դրուած ամէն
խստութիւնք պիտի ջնջուին:

Ոչ — օրթոտօքս՝ բայց արդէն պաշտօնապէս
ճանչցուած դաւանութիւնք նոր եկեղեցիներ
շինելու կամ նորոգելու համար կը բաւէ որ
իրենց եկեղեցական իշխանութեան կողմէ
արտօնագիր մը բերեն, և ուրիշ վկայագիր
մը՝ հաստատող թէ ունին դրամական միջոց-
ներ՝ շէնքերու վերաբերեալ ճարտարապե-
տական կանոնադրին պայմանները գոհացնե-
լու և շէնքն հաստատուն կերպով կառուցա-
նելու համար:

Պիտի ջնջուին այն օրէնքները որով ինչ
ինչ պարագայից մէջ բռնի կը փակուին կա-
թոլիկ վանքերն ի Լեհաստան:

Ամէն դպրոցներու մէջ, տղայք իրենց
կրօնը պիտի ուսնին իրենց երկրին լեզուովը,
և կրօնուսոյցները պիտի ըլլան մէն մի դա-
ւանութեան հոգեւորականները, կամ եթէ
չըլլան, նոյն դաւանութեան պատկանող աչ-
խարհականներ:

Գալով Ռուսիոյ ոչ — քրիստոնէական դա-
ւանութեանց, յանձնաժողովի մը պաշտօն
պիտի տրուի անյապաղ Պետական Խորհրդին
մատուցանել օրինազօծեր հետեւեալ կէտերու
վրայ. —

1. — Շինութիւն ոչ — քրիստոնէական ա-
ղօթատուններու:

2. — Ընտրութիւնն և անուանումն ոչ—քրիստոնեայ հոգեւորականութեան :

3. — Զինուորական ծառայութենէ ազատ կացուցում կարգ մը ոչ—քրիստոնեայ հոգեւորականաց :


4. — Ոչ—քրիստոնեայ կրօնական դպրոցներու բացում :

5. 6. — Կովկասի, Թուրքաստանի և անդրկասպեան երկրին մէջ բնակող Խրկըզներուն հասարակային կազմակերպումն ու եկեղեցական վարչութիւնը :

7. — Վերաքննութիւնն Լամայականաց կանոնագրին, զորոնք այսուհետեւ արգիւրւած է պաշտօնագրերու մէջ կռապալտ կամ հեթանոս կոչել և ըստ այնմ վարուիլ անոնց հետ :

ԼՈՒՍԱՌՈՐԵԱՅԻ ՀԱՆԴԵՍԸ

ՆՐՈՒՍԱԳԵՄԻ ՄԷՋ(*)



Աւագ շարաթ օր, երուսաղէմի Ս. Յարութեան տաճարը մի միայն օրթոտօքս ժողովուրդներու տրամադրութեան ներքեւ կը գտնուի : Հոն կը կատարեն իրենց մեծ հանդէսը, Լուսաւորեայի հանդէսը : Այս յորջորջումին պատճառը սա է որ հրեշտակի մը կողմէ երկնքէն բերուած լոյս մը պարտի իջնել Քրիստոսի գերեզմանին վրայ, լուսարար եպիսկոպոսին աղօթքով : Այս վերջինը Ս. Գերեզմանին մատուռը կը մտնէ, ձեռքին մէջ ունենալով երկու մարած մոմեր. պահ մը յետոյ՝ աւելի կամ նուազ երկար—այդ մոմերը վառած կը ներկայացնէ ժողովուրդին՝ Գերեզմանին մատրան պատին վրայ կարգադրուած երկու լուսամուտներէ, որոնց ձախակողմինը Հայերուն կը վերաբերի, իսկ աջակողմինը՝ Յոյներուն :

(*) Մ. Խ. — Բացառիկ պատճառով մը՝ «Հինէն ու նորէն» գլուխին տեղ, որ նշանակուած է մեր Բովանդակութեան մէջ, կը հրատարակենք Ռքվիւ sp Բառիի մէջ Տիկին Միրիամ Հարրիի գրած գեղեցիկ մէկ յօդուածէն մաս մը՝ Զատիկի տօնախմբութեան վրայ, երուսաղէմի մէջ :

Աւագ շարաթ օր, այդէն շատ առաջ, Օրթոտօքսները գունդագունդ կը դիմեն Ս. Յարութեան տաճարը : Ամէն ոք ձեռքին մէջ բռնած է խոշոր մոմ մը, ա'յնքան ճիւղերու բաժնուած, որքան տարիք ունէր Քրիստոս, այսինքն երեսուներեք : Ի հարկին իբր գաւազան ալ կը գործածեն այդ մոմը :

Այսպէս չիթութիւնները կը սկսին այն վայրկեանէն երբ հաւատացեալները ներս կը խուժեն. լուսադոյն տեղերը գրաւուած են Խալիկներու եւ Հապէշներու կողմէ, որոնք վանքէ զուրկ գտնուելուն՝ գիշերը սրբարանին մէջ անցընելու իրաւունք ունին : Բարեկարգութիւնը կը վերահաստատուի ընդհուպ, եւ հաւատացեալներու ահագին ալիքները հետզհետէ ոտքի վրայ կը դիզուին եկեղեցիին գմբէթներուն տակ, չըջապատած Ս. Գերեզմանը :

Ընդհուպ տասը հազար ուխտաւորներ եւ ուխտաւորուհիներ, ուռս, սերպ, հայ, սուրիացի, պուլկար, ալպանիացի եւ ուրմէն, սեւ շապիկներով, թաւիչ տառատունկերով, պուրնուզներով, բրտէնկոթներով, իրարու քով սեղմուած, քրտնաթաթաւ, շնչասպառ, դարչահոտութեամբ չըջապատուած, հրաշքին կատարման կը սպասեն բուռն յափշտակութեամբ ու մանկական միամտութեամբ :

Վերը, վերնատանց եւ դարաւանդներուն մէջ, ուրիշ դժաւանութեանց պատկանող զբօսաշրջիկներ իբր հետաքրքիր ներկայ կը գրտնուին այդ տեսարանին : Հոն ալ իրար կը հրմշտկեն, աւելի լաւ տեսնելու համար : Պատշգամներէն կը կախուին, սիւններուն վրայ կը մագլցին, խոյակներուն կը կառչին : Իսկ աւելի վեր՝ գմբէթին վրայ բացուած լուսանցքներուն փակած կը տեսնուին արաբ կիներու հարիւրաւոր դէմքեր, թէռաններու արտաքին ճամբով հոն եկած : Այնպէս որ լուսամուտներէն իջած լոյսն ալ կը խափանուի :

Առջի իրիկունէ մարած ըլլալով բոլոր լոյսերը, եկեղեցին կիսատուերի մը մէջ կը թաղուի : Սեւ ու վժացող գանգուածներ միայն կարելի է զանազանել, մոմերու ձերմակ գաւազանիկներով գծաւորուած եւ դէպի

երկինք յառած հաղարաւոր շողշողուն աչքերու նայուածքներով կիտաղրուած : Հոս հոն կախուած պատկեր մը կը փողփողի մերթ ընդ մերթ, իր վրայ դրուած յակինթներուն պտտճառաւ : Այնքան սուստիկ տաք կ'ընէ որ մոմերը կը սկսին հալիլ և վերնատան մէջ կրկնէր կը մարին :

Վերջապէս կէս օրին կուգայ եպիսկոպոսը, կարմիր շուրջառ առած, և առանձին կը մտնէ Ս. Գերեզմանին մատուռը : Կրկնակ թափօրով՝ հայ և յոյն կրօնաւորներ, վերջինները հրեշտակապետի զգեստներով, մէյ մէկ կողմի վրայ կը կենան և Լուսաւորեայի շարակոններ կ'երգեն : Կրօնական անձկութիւն մը կը տիրէ Տաճարին մէջ, և պահ մը անշարժութեան կը մատնէ հաւատացեալները : Հապա երկնային լոյսը եթէ չիլնէ, ինչպէս պատահած է տարի մը : Ու բազուկները կ'երկարին, ցնցոտիները կը ծփան, կ'աղօթեն, կուլան, կ'երգեն, կը սպառնան մաքուճանները՝ աչքերնին յառած դէպի կամարը՝ իրենց յափըշտակուած աչքերով կը հայցեն հրեշտակին գալուստը, մինչ Սուրիացիները, միշտ կըրքոտ, իրենց ճրագները կը ճօճեն : Գարշ հոտ մը կը տարածուի այդ ջերմեռանդ ու քրտնաթաթու բազմութեան մէջ :

Բայց ահա, միասնաբար, գերեզմանին երկու լուսամուտներուն առջև կ'երևան երկու բոցավառ մոմեր, եպիսկոպոսական ձեռքերու կողմէ ներկայացուած :

Խեղալեղ աղաղակ մը կը թնդայ, և ամբողջ ուժգնօրէն առաջ կը խուժէ : Մէկ անկընթարթի մէջ մոմերը կը վառուին և անհուն տաճարը կը նմանի հրավառ ծովու մը : Վերնատանց մէջ գոնուող դրօսաշրջիկները, որոնք դերձանի մը միջոցաւ վար կ'իջեցնեն իրենց մոմերը, կրակի մէջ օրսորդութիւն կ'ընեն գողցես :

Եպիսկոպոսը եւ իր հրեշտակապետները երեք անգամ շրջանը կ'ընեն գերեզմանին, յետոյ, երկնային տեսիլքի մը պէս կ'անհետանան ոսկիէ դուռներուն ետին :

Այն ատեն լուսեղէն մոլեգնութիւն մը կը տիրէ : Հիւսնդոտ այրեր ու կրկնէր զգեստնին կը պատշտեն, իրենց մարմիններուն վը-

րայ պտտցնելով ճրագները : Կուրծքերնին, մէջքերնին, ծունկերնին կ'այրեն, հոգեւոր երգերու ընկերակցութեամբ, եւ ցաւերու մէջ տուայտելով : Իսկ անոնք որ կ'ուղեն բուժել իրենց հոգին եւ սրբել իրենց մեղքերը, մոմին բոցը կը մարեն ձեռքերնուն մէջ, հաւած մոմի կտորներով կը ծածկեն մարթերնին, կը չնչն ծուխը, դետին կը փռուին՝ երկնային լոյսով զեղանելու համար : Ուրիշներ ալ, հերարձակ, անպատկառ, սրբութեան համբոյրներ կը փոխանակեն իրարու հետ, անպատշաճ ծնրադրութիւններ կ'ընեն :

Ու այդ շամբութեան մէջ խորասոյզ, հրեղէն լոյսէն արբշիւ, մոմով գինովցած, առջի օրուան մարմնական տուայտանքներէն ու այս օրոտ ան անշարժութենէն զայրագնած, ամբողջ կ'ոստոստէ, կը վժայ, կը դառնայ մտացնոր՝ վիճակի եւ իրարանցումի մատնուած : Հոն կը նշմարուին խափշիկ կրօնաւորներ, մօրուեղ բօքեր եւ կնոջական երկար մաղերով սարկաւազներ : Բայց ընդհուպ հինգ հազար մոմերու անթափանց ծուխը կը շրջապատէ ամէն բան : Ոչինչ կը զանազանուի ալ եւս, ո՛չ վերը՝ վերնատանց մէջ, եւ ոչ ալ վարը՝ մթաստուեր դամբարաններուն ու ծխոտած մատուռներուն խորը :

Յետոյ՝ հաւատացեալներու ամբողջ եկեղեցիէն դուրս կը խուժէ ուժգին թափով, այնպէս ինչպէս ներս մտած էր :

Ու իրենց խանութներուն սեմին վրայ կեցած, կամ իրենց պատուհանէն վար ծռած, երուսաղէմի բնակիչները ապահար կը դիտեն անցքը հաղարաւոր հաւատացեալներու, որոնք մուշտակէ գլխարկներ դրած եւ երկար մոյկեր հագած, կը վազեն ու կը վազեն ցերեկատուն, երեսուներեք ճիւղ ունեցող մոմերը ձեռքերնին բռնած, մօրուքնին շիկագոյն դարձած, դէմքերնին սւեցած, և հազուատներնին մոմի կաթկթութիւններէն գեղնած : Կը շարունակեն վազել անոնք, մէջքերնուն գօտին ինկած, գլխարկնին կորսնցուցած, խլալայի (քաֆթան) մը կամ զգեստի մը ծայրին ետեւ պահելով երկնային լոյսէն վառուած իրենց մոմերը, որոնք երբեմն կը մարին ճամբու արագութենէն կամ հովէն, եւ զորս կը փութան վառել ուխտակիցէ մը :



ԿԱՅՍ. ՊԱՐԻՍԻ

ՎԿՆ. Կայսրը հրամայած ըլլալով որ Մալիէէն այս տարի Ազգ. Պատրիարքարանի յատկացուած 40,000 շրշ.էն զատ, Իր Անձնական Գանձէն Էս 25,000 շրշ. շնորհուի իբրեւ Զատկական պարգեւ Ն. Կ. Վեհափառութեան, Կայս. Անձնական Գանձուն նախարար Վսեմ. Սազըզ Յովհաննէս էֆ. Խըթման չաքաթ իրիկունը Ազգ. Պատրիարքարան գալով՝ սոյն գումարն անձամբ յանձնեց Ս. Պատրիարք Հօր որ բարեմաղթութիւններ ըրաւ Կայսերական արեւշատութեան համար եւ շնորհակալութեան զրաւոր Ուղերձ մը յանձնեց՝ յոտս Կայս. Դահլոյից մատուցուելու խնդրանօք:

ՇԷՖԱՍԿԱԹ ՊԱՏՈՒՄՆԵՍԱՆ

Բերկրութեամբ կ'արձանագրենք, ինչպէս արդէն հաղորդեցին օրաթերթերը, թէ ՎԿՆ. Կայսրը բարեհաճած է երկրորդ կարգի Շէֆաթաթ պատուանշան շնորհել Պարսկական դեսպանատան Բ. Թարգման եւ ծանօթ վաճառական Դրիգոր Խան Շամտանձեանի Տիկնոջ եւ Աղեքսանդրիոյ երեւելիներէն Աբրահամ Բարթող փաշայի Տիկնոջ:

Թէ՛ Տիկին Պէաթրիս Շամտանձեան Խան եւ թէ՛ Տիկին Նրանուհի Բարթող փաշա, — որ մայրաքաղաքս կը գտնուի օղափոխութեան համար. — Կայսերական այս բարձր գնահատման պատուոյն արժանանալուն առթիւ ընդունեցին հրապարակային եւ անհատական բազմաթիւ շնորհաւորութիւններ ուրոնց կը միացնենք նաեւ. Խմբագրութեանս շնորհաւորութիւններն ու խնդակցութիւնները:

ԶԱՏԿԻՍՏՆԸ

Զատիկի տօնը փառաւոր հանդիսաւորութեամբ տօնուեցաւ մայրաքաղաքիս եկեղեցիներուն մէջ: Երկուշաբթի օրը, Ս. Պատրիարք Հայրը ընդունեց Վարչական Ժողովներու, Տեսուչ Խորհուրդներու, Հոգաբարձութեանց, Խնամակալութեանց, Թաղ. Խորհուրդներու, եկեղեցականաց եւ աշխարհականաց շնորհաւորութիւնները՝ Պատրիարքարանի դահլիճին մէջ ուր շնորհաւորական ատենաբանութիւն մը արտասանեց Վաղ. Ժողովի ատենապետ Տիգրան էֆ. Եղևուֆեան եւ պատասխանեց Ս. Պատրիարքը՝ ընդհա-

նուր ատենութիւն մը ընելով: Երկու ատենաբանութիւններն ալ աւարտեցան բարեմաղթութիւններով ՎԿՆ. Կայսեր արեւշատութեան համար, որոնց ձայնակցեցան ներկաները:

Զատիկի երեք օրերուն մէջ Ս. Պատրիարքը ընդունեց այցելութիւնները հոգեւոր պետերու որոնց այցելեց փոխադարձաբար. նոյնպէս ընդունեց պաշտօնական անձնաւորութեանց եւ դեսպանական մարմինն շնորհաւորական այցելութիւնները:

* *

Երուսաղեմի Պատր. Փոխանորդ Տ. Դէնորգ եպիսկ. Երէցեան Էս ընդունեց, Երուսաղեմատան մէջ, եկեղեցական եւ աշխարհական բազմաթիւ այցելուներու շնորհաւորութիւնները Զատիկի տօնին առթիւ: Երուսաղեմի Ս. Պատրիարքը երկու հեռագիր ուղղած էր Երէցեան Սրբազանին, առաջինով հաղորդելով թէ Լուսաւորեայի հանդէսը խաղաղութեամբ կատարուեր է Ս. Յարութեան տաճարին մէջ, եւ երկրորդով՝ օրհնալիւր շնորհակալութիւն յայտնելով իր Փոխանորդին շնորհաւորական հեռագրին ի պատասխան:

ՄԵԼԵՈՒՄ


Հայ — Հռոմէականաց Պատր. Փոխանորդ Տ. Աւետիս արքեպիսկ. Արքիարեան, որ ութը տարիէ ի վեր կը վարէր այդ պաշտօնը, հրաժարական տուած ըլլալով վերջերս՝ հինգշաբթի օրը Պէրութի ճամբով Զմմառի վանքը մեկնեցաւ, հոն հաստատուելու համար: Տ. Աւետիս արքեպիսկ. չորեքշաբթի օրը Կայս. Պալատ երթալով, Բարձր. Թահսին փաշայի միջոցաւ երախտագիտութիւն մատոյց յոտս Կայս. Դահլոյից՝ իր պաշտօնավարութեան միջոցին, եւ մասնաւորապէս երկիցս վարած Տեղւոյական չրջանին մէջ արժանացած Կայսերական շնորհներուն համար: Յետոյ, Բ. Դուռը երթալով, այցելեց Բարձր. Մեծ — Եպարքոսին ու նախարարներուն եւ իր հրաժեշտի ողջոյնին հետ՝ շնորհակալութիւն մատոյց:

Հիմնադիր — Կ. Ս. ԻիֆիօճեԱՆ

Տէր ԷՍՏՈՐԵԳ — ՏՈՒԹ. ԵՒՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՎԵԼԻՔ Օրագրի

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԳ. ԸՆԿ.

Հիմնադրվել է 1875 թ. թ.

Կը գործէ ուղղակի ճիշտ. կառավարութեան հսկողութեան ներքին Ընթացիկ ապահովութեամբ. 339 ՄԻԼԻՈՆ Ֆր. Իրամագլուխ եւ պահեստ 38 ՄԻԼԻՈՆ Ֆր. Ընդ. գործակալ Պոլսոյ եւ գաւառաց ԱՐԱՄ Ս. ԳԱԼՖԱՆԱՆ

Պոլսոյ, Հանգուլոյ խան Դո. 53

Իրաւունքները պատուարար գործակալներ կը լինաւորին: 8—50



ՅՈՎԱԿԻՄ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՍՏԱՄԱՐՈՅԺ

Մուղափէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Դեպարտաման

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Զբոսանքի արարքման

Պալպալեան ամէն օր ահուայի ամէն տե-
ռակ հիւանդութիւններով տառապողներ,
կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեք-
շաբթի մինչեւ ժամը 5: Դիւերութեան օր եւ է
ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'ե-
րաշխաւորէ իր լեցուցած ու չինած ահուա-
նեքը: Յորեկները ահուայ քաշել տալու հա-
մար որով լարձք մը չկայ. քաշել տալովին
կամքէն կախեալ է: Վկայեալ տառամաքու-
թեան Տիկին Բոլին եւս կը գտնուի միշտ նոյն
դարձանքան մէջ: Աղփայտեալն ձեռն 9—10

ԱՍՏԱՄԱՐՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԵԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻՒ 200

Կալաթա-Սէրայի Լիւթին դէմ

Գ. Ե. Ե. Ե. օրերը առաւօտեան կանու-


խեն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

Բ. Գ. Ե. Ե. օրերը 6 են մինչեւ 11 1/2

Երաւի օրերը ժամադրութեամբ 7—10

PHOENIX ASSURANCE L Co.

“ՖԻՆԻՔՍ,”



Հիմնադրվել է 1782 թ.

Կը գործէ Ի ՊՈԼԻՍ 1869 թ. Ի ՎԵՐ

ԱՆԳԼ. ԱՊԱՀՈՎԱԴՐԱԿԱՆ ԸՆԿ.

Իրամագլուխ եւ պահեստի դրամ

Անգլ. ոսկի 4,218,000

Ֆինիքս ասակ հրդեհի դէմ Ապահա-
վաւորութեան Ընկերութիւնն մըն է, ծանօթ
իւր պատուաւորութեամբ եւ վստահութեամբ մէջ
իւր անմիջական վճարումներով:

Ֆինիքս կ'ապահովաւորէ հրդեհի եւ
կայծակի դէմ ամէն տեսակ տնտեսական
շարժումն ուստի անհրաժեշտ է, յոյժ նպաստաւոր
պայմաններով:

Ընկերութեան նշանաւորութեան եղան է.

ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ
ՀԱՏՈՒՅՈՒՄՆ ՎՆԱՍՈՒՅ. Յաճախ վճար-
ած է տնտեսական քան 27,000,000 անգլ.
օսկի:

Ընդհ. գործակալ Պոլսոյ եւ գաւառ-
աց: Գ. ՎԱՐՐԻԱՆԵԱՆ

Վիքայիս խան, Պանֆ Օթումանի փոյ
Ղալաթիս:

Փախ դործակալք Ի Պոլիս

ԹՈՒԲ. ԱՐԻԿԵԱՆ ԺԻՎԱՆ ԹԵՔԵԱՆ

Էմին պիս խան Յանգլեան խան

Զինիլ բիւզուրու

Ա. ԷՆՔՍԵՐՃԵԱՆ

9—10

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐ ԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՑ ԱՊԱՀՈՎԱԴՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՋ 1828-1829

Հ Բ Դ Ե Հ Ի Զ Ի Ի Ղ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ փասք	274,000,000	Փր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Ց Զ Ի Ի Ղ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ փասք	129,000,000	Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնը	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոյց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի հաւար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գինեւոյ: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերաշնչեց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան մայմանները: Շահաւատիկներու տարւէ տարի անմիջապէս վճարում, որով Իւնիոնի ապահովագրողը Ձերժ ԵՆ այն վնասներէն եւ յուսալաւութիւններէն, որոնց կենթարկուին միտ տնտեսական, որ շահաւատիկներու բաւական (accumulation d'es bēnēfices) ՅՈՒԻ եւ ՎԼԱՍԱԿԱՐ դուրեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաթ Քաթրին Ծղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Լուայէթ Խան:—Գործակալութիւնը Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

9—10

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԴՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒԱԼԱԼ ՆԱԼԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ.

ԳՈՒԹՍ ԼՈՒԻ ՏԷ ՊԱՎԻԵՌ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդգեմ հրդեհի եւ ծովային աւերակներու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնն կը կատարուին լաւագոյն պայմաններով:


Սոյն ընկերութեանց Դրամասունքն է Ի Կ. Պոլիս, Քոնսթ Լիօն

Ընդհ. եւ լիազոր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Հանօբուլօ խան, Թ. 52—53—54—55—56

9—10



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սենեկէն, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաւորի աղբիւր մըն է։

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին։

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը զննէ։

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՇԱՐԲԱՍԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | | |
|---------|---|--|
| ԲԵՐՍ. | } | 1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝ |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ. | } | 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէոյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | } | 1. Սուլթան Համամ, Թ. |
| | | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13. |
| ՍԵԻՏԱՐ | | Չարչը Պօյու, Թ. 120. |

Դասերը եւ նորոգութիւնք ձեռք.

Կատարելաբար երաշխաւորութիւն։

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ։

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղոզլուի տունը։

1—10

ԿԱՐԱՊԵՏ ԷՖ. ԻԻԹԻԻՃԵԱՆԻ Թարգմանած գիրքերէն հետեւեալները կը գտնուին Տէր-Մինասեան գրատունը եւ մայրաքաղաքիս միւս հայ գրադատներուն քով։

Կարմիր մագդոց երգումը	2	10
Ընտանեկան	2	15
Փարթիոյ ամուսնութիւնները	1	2
Թափառական Հրեայ	4	50
Արուարձանին աղան	3	15
Հանրապետութիւն օճիւրը	1	5

Սիգրուք Բաղ. Տնտեսութեան 1 4
Ընտանեկան գաղափարներ 3 15
5—10

ՀԱՄԱՌՈՏ ՕՍՄ. ՊԱՍՏՈՒԹԻՒՆ

Ի պէս Ազգ. նախակրթական վարժարանաց գրեց ԳՐԻԳՈՐ ՄԱՐԴԱՐԵԱՆ
Կեդրոնատեղին է Կ. Պօլիս Չաքմաքըլար
Չաքմաքըլար խան, Գաղաթիւն Միհրան
էֆ. Կազմատունը. Գին 100 ՓԱՐԱ 6—10

ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

ՎՃԱԱՌԱՏՈՒՆ

Հ Ե Ր Ճ Ա Յ Ի



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Գոհաւերդեցեալ, ամեն տեսակ կահ կարասիներու եւ ամենեւն ցորածեւ

հազուսներու, ելն.

Պատիւ ունինք ծանուցանել պատուարժան հասարակութեան թէ՛ մեր վաճառատանց ապրանքներուն տեսակները աւելի ճշտորեւելու ու մեր լաւագոյն յաճախորդաց աւելի գոհացում ապրելու նպատակով, ՈՍԿԵՐԶՈՒԹԵԱՆ վերաբերեալ ամէն տեսակ ապրանքներէ զտա. կրնե՞նք եւ այլեւրեւ համար՝ եւ մեծ ու վաճառ ամէն տարիքի յատուկ ՉԳԵՆՏԵՆԵՐՈՒ, ճերմակեղէններու եւ (թօհաֆիէ) ու միանգամայն ամէն տեսակ առաջնակարգ ԿԱՐԱՍԻՆԵՐՈՒ (ձեղունի լամպաներ, քֆրաններ եւ այլն.) ճախ մթերանոց մը հաստատած ենք. խիստ դիւրամատչելի գիններով, եւ կանխիկ ու ապառիկ պայմաններով:

Արդ՝ կը հրաւիրենք մեր համակցելի յաճախորդները, որ հաճին դիմել վերոյիշեալ վաճառատները, ուրկէ անտարակրօս անհուն գոհունակութեամբ պիտի մեկնին:

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարիւրին 20 կտնխիկ եւ մնացեալ գումարին հարիւրին 5 շաբաթակուն վճարմամբ:
2. Կտնխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ:
3. Կտնխիկ ծախուած ապրանքներէն միմիայն ադամանդեայ գոհարեղէնները երբ գործածուած ըլլա՞ց ան վնաս մնացած ըլլա՞ն, հարիւրին 10 զեղչով եւ կտնուին: Իսկ ապառիկ ծախուած եւ անվնաս մնացած միմիայն ադամանդեայ գոհարեղէններն ալ հարիւրին 15 զեղչով եւ կտնուին:

9—10

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Յ. Գ. Շարաճական վճարմանց համար հաւաքիչներ ընդմիջտ պատրաստ են:

ՄԵՇ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶԱՅ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 13 Կ. ՊՈԼԻՍ



ՌՕՍԻԱ-ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԳԵՀ. ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆՔ, ՍՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուքազով արտօնուած

Կեդրոնաւորին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԳԵՀԻ, ՓՈԽԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈՒԿԱՅՈՒՔՈՎ ԵՒ ՇՈՒԿԱՅՈՒՔՈՎ ՈՒՂԵՒՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կոտ, րուելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,667 ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

142,585,000 *

Ընկերութեան ապահովագրութիւններուն վճարուած դրամագլուխ եւ վնասուց հատուցում

314,768,000 »

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տոկոս

56,585,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա,

9—10